



ԵՐԱԿԻՇ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (160)

4 (4) ապրիլ 2019

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 104-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

104

ՀԱՅՈՑ ԲԱՆԱՏԵՂԾ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ԾՆՆԳՅԱՆ 105-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ 27 ԱՊՐԵԼ 1914 Թ.

Ինչ որ մերն էր, հավաքացեք, նորից մերը կլինի, Հայոց բազը՝ Մախան ի վեր՝ նորից վերը կլինի, Շիրազ, թո սուրբ խենթությունն էլ, սուրբ մարգարե կղառնա, Արեւոյությունն՝ աշխարհից դուրս, ներսում սերը կլինի:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

3

ՍԵՐԻՆԵ-ԼՅՈՒՐԱ ԹՎԴԵՒՈՍՅԱՆԻ ՆԿԻՐՅԱԼ ԱՇԽԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՋՈՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



Միջազգային ամսագրի՝ «Regional Post # 3» 2018 թվականի համարում տպագրվել է հոդված «Անվտանգ խաղաղապարակ սահմանամերձ Կոթի գյուղում» վերնագրով, որտեղ նշված է.

«Յուկոտեմբերի 26-ին ՅԲԸՄ-ի «Կամուրջ» ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ ֆրանսիական երաժշտության համերգ, որը կազմակերպել էր Սերինե-Լյուրա Թադևոսյանը, որից ստացված հասույթը փոխանցվել է «Պահպանված գարգացման հիմնադրամին», Տավուշի մարզի Կոթիի սամահանամերձ գյուղում խաղաղապարակ կառուցելու համար: Այն կհամալրվի դպրոցական անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով, խաղալիքներով, որը թույլ կտա նրանց դասընթացները դարձնել առավել անվտանգ, պաշտպանելով հրաձգություններից»:

Վերջերս «ԵՊԿ հրատարակչությունում» հյուր էր Հայկական Բարեգործական ընդհանուր միության Բարի կամքի Դեսպան, օպերային երգչուհի, լեզվաբան, Ֆրանսերեն լեզվի փորձագետ-ուսուցիչ օպերայում Սերինե-Լյուրա Թադևոսյանը:

2010 թ. Ս. Թադևոսյանն ավարտել է Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի Ֆրանսերեն լեզվի ֆակուլտետը, 2008-2009 թթ. ընտրվել է որպես լավագույն ուսանող և անցել ուսումնական ստաժավորում Փարիզի Սորբոն համալսարանում:

7

ՄԵՉ ՀԵՏ ԶԱՅԼՈՂ ՀԱՅ ՄԵԾԵՐԸ. ՄՇԱԿՈՒՅԹՈՎ ՊԱՅԶԱՐԵՆՔ ԱՊՐԵԼՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԵՏ

Նվիրում ապրիլյան հերոսներին



Կ. Սարաջյանի անվ. ՄԵՇ, կատարում է Մարի Դակոյանը, կոնցերտմայստր՝ դոցենտ Արմինե Սողոմոնյան

Առնո Բաբաջանյանի անվ. երաժշտամանկավարժական թոլեջը և Կ. Սարաջյանի անվան միջնակարգ երաժշտական դպրոցը <http://www.conservatory.am/am/80-news-am/433-2019-04-05-07-13-35>: Այն կազմակերպել և վարում էր «ԵՊԿ հրատարակչություն» բաժնի վարիչ, երաժշտագետ՝ Գոհար Շադոյանը: Եվ դպրոցը, և թոլեջը, ներկայացան վաստակաշատ ուսուցչուհի Գայանե Ռաֆայելյանի դասարանի սաներով: Անվանի մանկավարժը, ինչպես և օրվա հերոսը՝ միջազգային ճանաչում ունեցող թավջութակահարուհի Սեդեա Աբրահամյանն ուսանել է Լևոն Գրիգորյանի դասարանում, Պ. Չայկովսկու անվ. ՄՄԵԴ-ում: Եվ փաստորեն ունկնդիրը վայելեց թավջութակի դպրոցի շարունակական ավանդույթները և սերնդափոխության ունկնդիրն ու ակնընդիրը եղավ: Կ. Սարաջյանի անվ. ՄԵՇ-ի 3-րդ դասարանի աշակերտուհի Մարի Դակոյանի կատարմամբ սկսվեց թավջութակի ռահվիրանի մեծարումը:

2

Անդունդի ելքին՝ կյանքի անդին



Նարեկ Դարոյան

Այսօր, երբ թվում է թե արդեն գրեթե անհնարին է զարմացնել հանդիսատեսին և առավել ևս՝ գոհացնել նրան, ի պայմանում հակառակի, ես գտա տարբերակ. միայն մեկ կարևոր պայման կա. երբ գտնվում ես բեմում՝ պետք է լինես անկեղծ: Սա նաև արվեստի կարևոր պայմաններից է:

Լինելով ԵՊԿ-ի ուսանողուհի և շվեդական բազմաթիվ երաժիշտների հետ, հասկացա, թե որքան անհրաժեշտ է, որ ուսանողները լինեն միախմբված և սիրեն միմյանց. ուրախանան մեկը մյուսի համար և միշտ պատրաստ լինեն աջակցելուն:

6

Հայ-Ռուսական համալսարանի Ֆրանսիական երգի ամենամյա միզապգային փառասոնը՝ Նվիրված Ազնավուրի հիշատակին



Հայ-Ռուսական համալսարանի ղեկավար, պրոֆեսոր՝ Արմեն Դարբինյան, ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր Դեսպան՝ ժոնաթան Լաբրոսի

Շառլ Ազնավուրի արվեստը կապի այնքան ժամանակ, քանի դեռ աշխարհառջակ շանսոնյեին հիշում են և ոչ միայն հասուն, այլև կրտսեր սերնդի ներկայացուցիչները:

6

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎ. ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱԾԻ ՀԱՐԳԱՆԻՔԻ ՏՈՒՐՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՉՈՂՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Կոմիտասի անունը կրող Երևանի պետական կոնսերվատորիան մշտապես իր մասնակցությունն է ունեցել մեր ազգի վշտալի օրերին և այն վեց հարյուր և ավելի մտավորականներից մեկի անունը կրող հաստատությունը բոլոր տարիներին բարձրացրել է իր ծայրը ոչ իմայն խոսքով, այլ երաժշտության հնչողությամբ՝ ահագնագելու Հայոց եղեռնի մեծ վիշտը. մեծ կորուստը թե՛ մարդկային, և թե՛ մշակութային, որ մեր ամենօրյա կռվանն է: Պայքարը ամենօրյա աշխատանքով, որ հենց երաժշտական մշակույթն է և այն դարձնողը, որ Կոմիտասի երազանքն էր և այն արվեստը, որ աշխարհին Կոմիտասը ապացուցեց, որ հայը կա, որ հայն ունի իր ինքնուրույն երաժշտությունը և հարատև է երկիր մոլորակի քաղաքակրթության հետ: Եվ տանում ենք մեր արվեստը երաժշտությունը սփռում աշխարհով մեկ զորանցելու Հայոց նահատակների մարտիրոսությունը, որով Սրբազան 2015-ին Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին:

3-6,14

В РЦНК в Ереване отметили 180-летие М.Мусоргского

29 марта 2019 года в Российском центре науки и культуры в Ереване состоялся литературно-музыкальный вечер «Возрождение», посвященный 180-летию со дня рождения русского композитора Модеста Петровича Мусоргского. Мероприятие было организовано совместно с Ереванской Государственной консерваторией имени Комитаса.

Приветствуя собравшихся, начальник отдела культурных и общественных программ Российского центра науки и культуры в Ереване Андраник Арзуманян поблагодарил Ереванскую государственную консерваторию за сотрудничество и выразил надежду на перспективу совместных проектов.



Андраник Робертович Арзуманян – начальник отдела культурных и общественных программ РЦНК, Нана Рафаеловна Маргарян – заведующая музеем ЕГК им. Комитаса

4

ՄԵԶ ՀԵՏ ՔԱՅԼՈՂ ՀԱՅ ՄԵԾԵՐԸ. ՄՇԱԿՈՒՅԹՈՎ ՊԱՅՔԱՐԵՆՔ ԱՊՐԻԼՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԵՏ

ապրիլի 2-ին Արամ Խաչատրյանի ռուս-թանգարանում մեծարվում էր Մեղեա Աբրահամյանը



Մ. Աբրահամյանի մեծարման-համերգի մասնակիցները



Արամ Սաթյան



Մեղեա Աբրահամյան, Արամ Սաթյան

1 Պետք է ասել, ինչպես փաստեց Մ. Աբրահամյանը «Նա շատ լավ կատարեց» թավջութակի երկացանկի բարդ տոնատներից մեկը՝ Ժորժ Բռնալի Դոմաժոր Սոնատ (1-ին մաս), կոնցերտմայստերն էր, դաշնակահարուհի, դոցենտ, դպրոցի դաշնամուրային բաժնի վարիչ Արմինե Սողոմոնյանը, ով և ընթերցեց ուսուցչական կազմի և տնօրեն Արմինե Պողոսյանի հոգեպարար ուղերձը.

«Լիիրավ համարվելով հայ դասական երաժշտարվեստի մուսեոսիկներից մեկը, իրապես Ձեր անունը ոսկյա տառերով գրվեց հայ երաժշտարվեստի անդաստանում, ինչը ցույց տվեց, որ երաժշտությունը սահմաններ չունի:

Ուսանելով հանձարեղ ուսուցիչներ՝ Լևոն Գրիգորյանին (Երևան) և Վյաչեսլավ Ռոստրոպովիչին (Մոսկվա), հավատարմորեն Ձեր մեծ ներդրումն ունեցաք դասական կատարողական երաժշտարվեստում:

Ձեր կանացի, փխրուն ու ազնիվ կերպարի հետ ներդաշնակվում է հպարտ, հաստատուն ու իր անելիքի մեջ հանդգնած առաջամարտիկ կերպարը, ինչը հասու չէ բոլորին:

4. Սարաջյանի անվան երաժշտական դպրոցի ամբողջ աշխատակազմը լավագույն ցանկություններով շնորհավորում է Ձեզ, մեր շատ սիրելի Մեղեա Աբրահամյան, Ձեր ծննդյան օրվա առթիվ: Կամենում ենք առողջության հետ շաղախված մշտադրոն եռանդ, կյանքի ու արարման երկարակեցություն:

4. Սարաջյանի անվան երաժշտական դպրոցի տնօրեն՝ ԱՐՄԻՆԵ ՊՈԳՈՍՅԱՆ»

ԵՊԿ ղեկավարի պաշտոնակատար, պրոֆեսոր Սոնա Դովհաննիսյանի ելույթը էլ ավելի զմայլեց իր իմաստուն խոսքով և մեջբերումներով, մեծարունակ սիրելի պրոֆեսոր, վարպետ-թավջութակահար Մեղեա Աբրահամյանին:

Ա. Բաբաջանյանի երաժշտամանկավարժական քոլեջը ներկայացրեց Անահիտ Շահինյանը: Նա 2-րդ կուրսի ուսանող է «Վերածնունդ» Գյումրու միջազգային մրցույթ-փառատոնի, 2014 թ, 1-ին մրցանակակիր և կատարեց Դավիթ Պոպերի 4-րդ (օպ. 47) Նոկտյուրը: Կոնցերտմայստերն էր Աստղիկ Սահակյանը:

Մ. Աբրահամյանի համար ինչպես անցյալ տարին այդպես էլ այս համերգային հանդիպման ժամանակ ներկա էին հայ կոմպոզիտորական դպրոցի վառ ներկայացուցիչները Դավիթ Սահակյանի Արամ Սաթյանի գլխավորությամբ: Եվ իհարկե ջերմ խոսքերի հետ միասին ժամանակին արտիստուհին էր հիացնում և երջանկացնում ինչպես նրանց ստեղծագործությունները կատարելով, այդպես էլ այժմ նրանք, իրենց ջերմ խոսքերով և կատարումներով հիացրեցին թե՛ թավջութակահարուն, և թե՛ ներկաներին: Իհարկե առանց Աննո Բաբաջանյանի սիրված երգերի, կամ ում հետ բազմաթիվ համերգների ու հյուրախաղերի են մասնակցել,

անհնարին է պատկերացնել հանդիպում Մ. Աբրահամյանի արվեստի հետ: Գնչեց նրա սիրելի «He cтeпa» երգը, որը սիրով կատարեց միջազգային մրցույթների դափնեկիր Աննո Բաբաջանյանի հիշատակի հիմնադրամի մրցանակակիր Արթուր Աղաջանով, կոնցերտմայստերն էր պրոֆեսոր Մարգարիտ Սարգսյանը, ով պատրաստակամ է մշտապես մասնակցել իրատարակչության շնորհանդեսներին և վերջերս, դրան առընթեր կազմակերպված «Վերնատան» միջոցառումներին, որի վառ ապացույցն էր նկարների ցուցահանդեսը, որ դեռ փակցված էր Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի արահում: Ջերմագին խոսքեր հղեց պրոֆեսոր Գայանե Գեղամյանը և մեծարվողին և իր իսկ ղեկավարած ամբիոնի դասախոսներին՝ դոցենտ Աննա Պողոսյանին և

Անհնարին էր պատկերացնել հանդիպումները վերջին շրջանում Մեղեա Աբրահամյանի հետ առանց նրա մասին գրքի հեղինակի երիտասարդ գրող Մերգեյ Մանվելյանի ներկայության և ելույթի: Նա բացի մեծարելուն նաև իր խոսքում նշեց. «...մեր ժամանակակից մեծերին պատշաճ մեծարելու համար պետք է շնորհակալություն հայտնեն տիկին Գոհար Շագոյանին, որ այս էլ 3-րդ անգամ է, որ միայն ես ներկա եմ Մ. Աբրահամյանի մեծարմանը նրա կողմից կազմակերպված և նաև այն գրքի շնորհանդեսը, որ ես հեղինակել եմ»: Եվ նաև մեր կողմից ներածական խոսքով հիշատակվեց, որ առաջին անգամ ԴԿՄ դահլիճում մեծարեցինք մեծն արտիստուհուն իր հեղինակած գրքի առթիվ, որի խմբագիրն էր անվանի երաժշտագետ Արաքսի



Դավիթ Վագարյան



Արմինե Գրիգորյան



Մերգեյ Մանվելյան



Գայանե Գեղամյան



Ռուբեն Ասատրյան

Մ. Սարգսյանին, ովքեր եռանդուն մասնակցություն ունեցան այդ օրը: Նրանք կատարեցին Մ. Աբրահամյանի գործընկերոջ հարգարժան բարեկամի, անմոռանալի եղվարդ Միրզոյանի «Ասուն են թե» ռոմանսը:

Կոմպոզիտոր, ԵՊԿ ամբիոնի վարիչ Արգաս Ոսկանյանը կատարեց իր ռոմանսը «Երկիթն ու մայրս» խոսք՝ Ջավեն Կասյանի, կոնցերտմայստերը, դաշնակահարուհի՝ ԲՄարիկ Սիմոնյանն էր:

Դավիթ Վագարյանը բացի ջերմ ելույթից սիրելի գործընկերոջը երջանկություն խորհրդանշող ժողկերներ նվիրեց մաղթելով նրան տոկունություն ու անսպասե եռանդ:

Ռուբեն Ասատրյանի ելույթը գրավեց նաև հիշողություններով. Մեղեա Աբրահամյան մենակատարի խոստովա-հանցելությունը և պրոֆեսիոնալիզմի և իհարկե անդավաճան հունորի մասին: Գաճելի էր գավելտական պատումներ լսելը նույնպես: Հիացրեց Մարինա Գևորգյանի դաշնամուրային ելույթը, նա կատարեց Նարինե Զարիֆյանի «Պրեյլուդը», և նրանք միասին շնորհավորեցին մեծ արտիստուհուն:

Մեներգեցողության ամբիոնից ելույթ ունեցավ նաև պրոֆեսոր Կարինե Մկրտչյանի սան՝ Նարեկ Աղամյանն, ով 3-րդ կուրսի ուսանող է լավագույն կատարեց Պ. Զայկովսկու «Взглядомълю васъ лeсa» ռոմանսը, կոնցերտմայստերն էր Քրիստինե Սիմոնյանը:

Սարյանը, ով այդ ժամանակ արդեն մեզ հետ չէր և Սոֆիկ Սարյանի խնդրանքով տողերիս հեղինակը նախաձեռնեց հիշյալ գրքի շնորհանդեսը, որ շատ վառ հուշեր արթնացրեց ներկաների սրտերում:

Հանդիպմանը ներկայացրեց նաև Մ. Աբրահամյանի այժմյան դասարանի սան՝ Վարդուհի Միրզոյանը, ով սովորում է բակավարական ուսման 3-րդ կուրսում: Նա հնչեցրեց Կոմիտաս (Ասլանազյանի մշակմամբ և փոխադրմամբ) «Կռունկ»-ը, կոնցերտմայստերն էր՝ Նունե Ասատրյանը:

Անհնարին է միջոցառումներ կազմակերպել Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում առանց Արմինե Գրիգորյանի խոսքով և ներկայությամբ, որ անպայման պատվում է մեծարանքի արժանի արտիստուհուն՝ սիրելի Մեղեա Աբրահամյանին:

Լևոն Զաուշյանը խոստացել էր ներկա գտնվել և չկարողացավ իր ջերմ խոսքերը չասել ու չուրախացնել սիրելի Մեղեա Աբրահամյանին, որպես գերդաստանով հայտնի թավջութակահարների ընտանիքից՝ լուսահոգի անվանի մանկավարժ և արտիստ Ալեքսանդր Զաուշյանի և կրտսեր Ալեքսանդրի անմիջական խոսքի մեջբերմամբ, որ Մեղեա Աբրահամյանի կատարումը շատ տպավորում է և յուրօրինակ:

ԳՐԱՐ ԸՆԳՈՅԱԼ ԵՐԱՇՅՈՒՆ



Արթուր Աղաջանյան Մարգարիտ Սարգսյան



Աննա Պողոսյան Մարգարիտ Սարգսյան



Արգաս Ոսկանյան ԲՄարիկ Սիմոնյան



Վարդուհի Միրզոյան Նունե Ասատրյան

ԱՍԵՆՔ ՄԻ ՀԱՅ՝ ՄԻ ԱՐԱՐԱՏ «Հովհաննես Շիրազի» շարիփ

ՅՈՒՆԿՆԵՍԻ ՇԻՐԱԶԻ՝ հայոց մեծ դատի
ու պահանջատիրության վշտերգակի մանկությունն
անցել է Գյումրիում սովի, վշտի, արցունքի մեջ...

Նա դեռ իր անուշ թոթովանքների մեջ էր, երբ իր բուստանչի հորը՝ Թաթոսին, իրենց շենի վրա կացնահարում է թուրքը... Ըրբանդային դառը մանկություն տեսած փոքրիկ Օնիկը Գյումրիի շուկայում մի ծուխ խաղող գողանալու համար, դարձյալ թուրքի ձեռքով, կեռ յաթաղանից ստացել է խոր մի սպի իր մարմնի վրա:

Այնուհետև, բանաստեղծը դառն օրեր է անցկացրել... որը, անապատան պատանհին՝ մի տեղ ջուր է ծախել, մի տեղ կոշիկ նորոգել... Ու այդ դժվարին օրերի հորձանուտում մայրը Աստղիկը տուն է բերում իր գտած սիրասուն որդուն (որը, մինչ այդ, ո՛վ զարմանք չճանաչելով մորը, ուզեցել է մոր ձեռքի հացը թոցնել):


Օնիկ Կարապետյանը հաճախում է դպրոց, դասերից հետո ընկերների հետ իջնում է գետի ափ ու հետազայում գրում. «Սեկից մի հաց, մեկից մի սոխ գողանում, գնում էինք Արփաշայր, լողանում»: Իր բոկոտն մանկության մասին նա իր տպավորիչ հուշաշխարհը բանաստեղծական տխուր ձևերով էր արտահայտում, դրանք իր սերնդակիցների ապրումներն ու զգացմունքներն էին, որոնք եղեռնից մազապուրծ որբ երեխաներ էին՝ չիմանալով «աշխարհն ինչ էր, մարդն ինչ էր», և ուր է տանում իրենց բախտի խռով ճամփան:

Պատանի Օնիկը ցերեկները ցրիչ է եղել գործարանում, իսկ երեկոյան գրել ոտանավորներ, որոնք բնության, մարդու, տիեզերքի, իր ծնողների, պապերի կորած Յայաստանի մասին է: Կարծ ժամանակ աշխատել է Հաջի Նազար գյուղում վարձատեղ, իր արկածային այդ օրերի հուշերը դարձրել երգ ու տող... Նրա արտասովոր տաղանդն, այնուհանդերձ, աննկատ չմնաց: Օնիկի բանաստեղծությունները կարդացել է Ատրպետը և, հմայված նրա վարդաբույր պոեզիայով, նրան անվանել Շիրազ: Տաղանդավոր բանաստեղծին նկատել է նաև Վահրամ Ալազանը, որին անվանում էին պոետների «կնքահայր»: Շիրազի գործերն արդեն տպագրվում էին, Գյումրիի տեքստիլ կոմբինատի «Բանվոր» թերթում: Ապագա բանաստեղծի ճանապարհն արդեն նշմարվում էր, բարի, հոգատար մարդիկ թեթևակաբար էին կանգնում նրան, որոնց շնորհիվ տպագրվեց նրա «Փարնամանուտ» ժողովածուն, որը հայ ընթերցողը ցնծությամբ ընդունեց:

Որպես արդեն կայացած պոետ Յովհաննես Շիրազը անվամբ, նա մայրաքաղաք Երևան մտավ իր տաղանդի ողջ հմայքով՝ գարնանային թարմ գույն ու բույրերով, «մանուշակներ՝ ձեռքին», բանաստեղծական շքեղաշուք պատկերներով ու նորաբանությունների շալվ մեղեդիներով... Եվ, իհարկե, թեև բացվեցին պոեզիայի դռները նրա հանձարի առաջ, թեև նա մայր բուհում ուսանեց, նրա հոգին փոթորկում էր Հայոց հողերն ազատված չէին՝ հայը «սպիտակ» եղեռնի մեջ էր, մայրենի լեզուն, դպրության հարցը մղվում էր երկրորդ պլան, դրսում ուժացման, խորթացման վտանգ կար... իսկ Մայր Ոստանում ժամանակն ու մարդը Կրեմլի ու Ստալինյան բռնատիրության կապանքներում էին... Սփյուռքից հայ ընտանիքները վերադառնալով Յայաստան, անմիջապես որևէ «պիտակի» մեջ էին վերցվում և մեկ-երկու ամիս հետապնդվելուց անց՝ թշվուռ էին աքտորավայրեր:

Մեծտաղանդ բանաստեղծի ստեղծագործական լույսը նույնպես գաղտնի, երկաթյա վարագույրի տակ ոմանք փորձում էին խամրեցնել միջակությունների միջոցով: Չարենցիցի հետո բոլորի մեջ վախ ու սարսափ կար, ժամանակներն այդպես էին թելադրում, Շիրազը շարունակեց, սակայն, «արթուն ու զգուն» պահել իր արյան կանչով արարվող թեման «Մասիսերգությունը»: Երկրային խոհերը, սիրտը, սերը, հոգին գնում, զանվում էրն մեծն Մասիսի բանտված ափերին, նրա հավերժ լուռ լանջերին: Մասիսերգակ, սիրերգակ,

Հայոց բանաստեղծ Հովհաննես Շիրազի ծննդյան 105-ամյակի առթիվ



Հովհաննես Շիրազ (Օնիկ Թաղևոսի Կարապետյան) (ծնվ. ապրիլի 27, 1914, Ալեքսանդրապոլում - մարտի 14, 1984, Երևանում), Հայկական ԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր (1975 Համամարդկային)՝ բանաստեղծությունների ժողովածուի համար, 1935-ից՝ ԽՍՀՄ գրողների միության անդամ

բանաստեղծը հետագայում լավ ըմբռնեց վշտերի, ցավերի մեջ հեծեծացող, եղեռն տեսած իր ժողովրդի ցավը՝ երգեց կորուսյալ Յայրենիքի, իր նահատակված ազգի ողբը: Նա տպագրում էր իր մորմուռն ստեղծագործություններն ավելի շատ արտերկրում, իսկ այստեղ՝ շատ խանգարողների հետապնդումներն էին, որոնք ոհմակներ էին կազմում՝ բանաստեղծին հոշոտելու, թույլ չտալու համար ազատ քայլ անելու... (նույնիսկ իր ծննդավայր գնալն անգամ հետապնդվում էր...):

Շիրազն ապրեց միշտ պայքարով, ճիրանների մեջ կարմիր կայսրապետության. նա հազար ցավի, վախի, հետապնդումների մեջ երգում, երազում, բարձրաձայնում էր այն, ինչը կարող էին անել շատ քչերը ներսում՝ դաժան իրականության ռեժիմի մեջ: Նրա գրքերը տպվում էին ձգձգումներով, գլավիտի մամլիչի ներքո Շիրազի բազմաթիվ ստեղծագործություններ տպվում էին սփյուռքում, (նրա մեջքին կանգնած էին իր ժողովուրդը և Սփյուռքը...) Շիրազի տպագրվող գրքերը, որոնք ունեին ամենամեծ տպաքանակը՝ նույն օրը վերջանում էին գրախանութներից... Նա իր ազգի զավակն էր, ազգի նվիրյալը, որը միայնակ, սակայն բարձրաձայն ողբում էր ազգի հոգու մեծ ցավը՝ թուրքերի կողմից նախաձեռնած Հայոց սև եղեռնը:

Յովհաննես Շիրազն ուղն ու ծուծով ժողովրդական բանաստեղծ էր ու ազգի պաշտելին, քանզի նա իր ոսկե քնարով, ողբալուց բացի, փառաբանում էր Մոր, Յայրենիքի, Բնության, կորցրած Երկրի սերը... Նա ամեն տարի, ապրիլյան եղեռնահուշ օրերին, բոլորից հեռացած, մեկուսացած էր... պատճառը... նրա զավակները հետագայում երևի այդ մասին կխոսեն, և ուղղախոս մարդիկ: Ահա, մեջքերենք նրա որդիներից մեկի՝ բանաստեղծ քանդակագործ Սիփանիի հուշը. «Հայրիկը այդ օրերին ավելի նյարդային էր, նա մտամոխրի ու լուռ էր: Հաճախ իր սեմյակում ասում էր՝ մեծնակ եմ, մեծնակ ես...»: «Մեծնակ է առյուծն՝ այդպես եմ և ես»: Բայրոնյան հայտնի տողը կրծում էր հոգին, բանտված Մասիսը բիրտ ճիրանների մեջ թաղված՝ բանաստեղծի քնարին պարզում էր տխուր մեղեդի և պատգամ. «Ով իմ իշխաններ, դարձեք միաբան, իմ ցրված աստղեր, եկեք գիրկ-գրկի, հյուսնեք Նոր արևն Հայոց տերության. այս է խորհուրդը մեր հավերժության...»:

1978 թ., երբ Երևանի պետական համալսարանի ուսանողներից մեկը Վիլյամ Սարգսյանի հարցրեց՝ ինչ կարծիք ունեք Շիրազի մասին, - աշխարհահռչակ գրողը պատասխանեց. «Շիրազ մեծ տաղանդ մըն է, և մենք պիտի հպարտ զգանք և պատիվ համարենք նրա հետ ծանոթ լինելը: Շիրազը շատ իրավացի է, որ Արարատ կերպեց: Որովհետև ամեն հայ մեկ Արարատ է և Արարատ ըսել՝ հայ ըսել է: Եվ Շիրազ մեծ գործ կընե իր այդ ձգտումով մտքող աշխարհի հայերում համար: Անիկա մեծ աստղ մըն է: Եվ եթե իմ Հովհաննես քեռին հոս ըլլար, չէր թողնի, որ մենք այդքան հեշտ խոսիմք Շիրազի մասն տաղանդի մասին, նա դրա փոխարեն կ'ասեր միայն՝ ծափ-ծափ», - և Սարգսյանը ծափահարում էր, հոտնկայս՝ երկար ու բուռն ծափահարում էր ամբողջ դահլիճի ուսանողությունը:

Մեծ բանաստեղծի հայրենաշունչ քնարը պոեզիայի Պառնասի մեջ շողշողում է ու Աստվածարար սեր է մաքուր, այն որքան ազգային է իր գաղափարայնության իմաստով, այնքան համամարդկային է գրական մոտիվների, ձևերի մեջ. այն տիեզերաշունչ ոգի ունի իր մեջ ամփոփած, որից բացվում են ազգային մտածողության խորունկ ոսկեշերտերն ու հայրենասիրական փիլիսոփայական շիրազյան իմաստությունը: Հովհաննես Շիրազի «Հուշարձան մայրիկիս», «Հայոց Դանթեականը», «Բիբլիական», «Տրգրան Մեծի փշտը և հավերժությունը», «Աստծո գլուխգործոցը», «Մամիկոնյան սուրը», «Ջևաի ծաղիկը», «Էքսպրոմտ», «Անի», «Սիամանթո և Խջեզարե» հանձարեղ գործերը հավերժապալ հուշարձաններ են Հայոց գրականության մո-

նումենտալ գանձերի կողքին: Նրա ժողովրդայնությունը կհարատևի այնքան, ինչքան մեր ժողովուրդը իր հավերժությամբ, իր նահատակների լուսաբույրով, ազգի հզորագոր ոգով...

Յովհաննես Շիրազը եկավ աշխարհ՝ գարնանաբույր ծաղկանց հետ խոսելու, արցունքն արցունքով դրանք ցողելու, կյանքի ծարավով առլեցուն էր, անցողիկ աշխարհն իր քնարի գունազեղ անաղարտությամբ փորձեց վերափոխել, «զտնել» ճամփան Մասիսի, Սիփանի, Մուշի, Վանի... Ու զարնան էլ՝ ազգի ողբերգությամբ ապրող Շիրազը «մեկնեց» դեպի հավերժություն իր ութ որբ զավակների ձեռքին մանուշակների, ծնծաղկափնջերով, ողջ հայության ուղեկցությամբ՝ Մասիսի խոհուն, վեհ, բայց և սզավոր հայացքի ներքո...

Հայ ազգը նրան թագադրեց՝ հայոց երգի մեծ բանաստեղծ...

Հայոց հանձարի բանաստեղծ մասիսերգակի շիրիմը ամեն տարվա հատկապես գարնան ամիսներին զարդարում են դարձնում պոետի սիրած վարդերն ու կակաչները, ծնծաղիկները, նրա պոեզիայի երկրպագուները խունկ են վառում, արտասանում...

Հովհաննես Շիրազի դուստրը՝ բանաստեղծուհի Անի Շիրազը, տեղեկացրել է մեզ հետևյալի մասին. «Շիրազի ծննդյան օրը՝ ապրիլի 27-ին հայրիկի մանկահուշ Գյումրին խնդության մեջ էր, որովհետև կրկին հպարտանալու առիթ կար... Շիրազի հարազատները, երկրպագուները, մենք՝ զավակներս, ավագ եղբորս գլխավորությամբ մեկնեցինք Գյումրի: Այդ օրը հիշարժան էր նրանով, որ Գյումրիի Շիրազի տուն-թանգարանի մուտքի առաջ բացվեց պոետի հուշարձանը, որի հեղինակը Արա Շիրազն է (աշխատանքի մեջ կար նաև կրտսեր եղբորս՝ Վանանդի օժանդակությունը): Բարերարությունը՝ ամերիկաբնակ Անահիտ Մարտիրոսյանի և ժենյա Այդինյան-Ռզայի մեկնեմսությամբ էր: Հայրիկի կիսամոգրու պատվանդանին փորագրված է՝ «Հայոց բանաստեղծ Յովհաննես Շիրազ. ամենայն հայոց Աստղերի պառնաս»: Բանաստեղծի բոլոր երկրպագուներն ըմբռնեցին շիրազյան քնարի անկրկնելի մեղեդիները... Նրա 95-ամյակը Գյումրիում նշանավորվեց ասմունքով, երգով, պար ու նվագով»:

Երևանում «Շիրազյան օրեր» միջոցառումները շարունակվեցին, որոնք բազմաբնույթ էին և հետաքրքիր: Տեղի ունեցան ասմունքի ցերեկույթներ, Շիրազի բանաստեղծության հիման վրա գրված երգերի ունկնդրում, ռեֆերատների, շարադրության մրցույթներ, ինչպես և այցելություն Կոմիտասի պանթեոն... Բոլոր միջոցառումներն անցկացվում էին Հովհաննես Շիրազի անվան դպրոցի և քաղաքապետարանի համագործակցությամբ (քաղաքապետ՝ Տ. Մարգարյան):

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՓՈՒԶՅԱՆ
«Մեծաց շարունակվող գրուցաշար. Ձրույցներ, դիմապատկերներ, խոհեր...» գրքից

* **ՀՈՒՇ** - Հովհաննես Շիրազի Մեծ Հայ ու Բանաստեղծի ծննդյան 60-ամյակն էր և հայրս նախաձեռնել էր նրա հետ հանդիպում ոչ այլուր քան հենց Մասիսի շրջանում Մասիս շրջկենտրոնում և ասել ու հրավիրել էր Վարպետին, այդպես էր հայրս Հ. Շիրազին անվանում: Եվ շատ ոգևորված Կենտկոմի տպարանում էլ չքնաղ կարմիր ու սպիտակ գույնով Մասիս ու Սիսով գծանկարված ու Վարպետի քառատողով ներբռնում գրած Հովհաննես Շիրազ ստորագրության տեսքով, տպագրել էր իրավիրատոմսն ու պետք է բաժանվեր: Ջանգ եղավ երեկոյան մեր տուն, գործնական զանգեր չէին լինում հայրս չէր մոտենում հեռախոսին, նախ չէր սիրում իր հանգստի ժամերին հեռախոսով խոսել, քանի որ գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջան էր գարուն էր և մի քանի ժամ էր ընդամենը հանգստանում ընտանիքի հետ: Մոտեցավ անհանգստացած հեռախոսափողը վերցրեց և տխրեց, սասց. «Լավ Վարպետ կբերեմ»: Ու նեղսրտած մայրիկիս ասաց, որ Շիրազն էր, «բոլոր իրավիրատոմսերը իրենց տուն պետք է տանեմ և արգելել են միջոցառումներն ապրիլյան օրերին»: Ես խնդրեցի հայիկիս գոնե մեկ իրավիրատոմս պահեմ ինձ հիշատակ, հայրս արգելեց, որ հաշված են չի կարող ոչ մի հատ թողնել, չի կարելի: Մենք բոլորս էլ հասկացանք. հայրս մեզ սովորեցրել էր, որ տանը ինչ որ լսում ենք, չի կարելի դրսում խոսել կամ պատմել, այդպես էլ ես այժմ առաջին անգամ եմ գրում այս միջադեպի մասին: Իսկ մինչ այդ Շիրազը խենթացել էր ուրախությունից, որ ինքը Մասիսի շրջանում Մա-

սիս քաղաքում պետք է տոնի իր 60-ամյակը: Հայրիկիս ասել էր «ոչինչ որոյակս» ու հայրս միայն մեզ ասաց, որ շատ անտրամադիր էր տոնային կալանք են տվել: Դա նշանակում էր, որ մենք պետք է լռեինք:

ՀՈՒՇ - Մայրիկս բացի ուսուցչությունից նաև Լեհիյան շրջանում շատ լավ մեթոդիստ էր համարվում և շատ հաճախ բաց դասեր, հանդիպումներ էր կազմակերպում: Նման հանդիպում էլ՝ ռուսաց լեզվի և գրականության վերաբերյալ ու Հովհաննես Շիրազին էին հրավիրել դպրոց: Եվ շատ գովեստի խոսքերի էր արժանացրել: Հանդիպումից հետո ղեկավարները և ուսուցչական կազմը Շիրազի հետ միասին լուսանկարվել են: Շիրազը հարցրել է, «Այդ հայուհի ուսուցչուհու անունը ի՞նչ է» պատասխանել էին՝ Ջուլիետտա Երեմովնա: Նա խեթ նայել էր մայրիկիս և այդպես էլ նկարում ստացվել էր, ու ոչինչ չէր ասել: Մայրս զարմացած եկավ տուն ու այդ պատմությունը հայրիկիս պատմեց նա բազմանշանակ ժպտաց ու ասաց, «Լավ է, որ քեզ ոչինչ չի ասել: Շիրազը տանել չի կարողանում, երբ հայկական անուններ չեն դնում իրենց երեխաներին, հոժար եղիր որ քեզ միայն թարս է նայել»:

ՄԵԿ ՆԿԱՐԻ ՊՍՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՔԻՑ



Լուսանկարը հանդիպում Հովհաննես Շիրազի հետ Երևանի 98-րդ միջնակարգ դպրոցի ուսուցչական կազմը, միջոցառումից հետո, 1969 թ.

Հ. Գ. Եթե հուշեր ունեք Հովհաննես Շիրազի հետ կապված, գրեք՝ սիրով կիրատարակենք:

Գ. Շաղայան

ԵՐԱՇԽՈՏ 100 ՏԱՐԻՆ ՄԵԿ ԿՁԳՆ ՈՒՆԵՆԱԿ ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆ



Լուսինե Զաքարյան

ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆ... Ժողովրդական դերասանուհի, հոգևոր երգերի անկրկնելի կատարող, հայոց երգարվեստի երկնակամարում լուսաշող աստղ, ում երգի լույսն ու մեղեդուն հնայքը արթնացրել է և տարիներ պիտի ապրեցնի սերունդների հոգին ծոպելու գեղեցիկին, վեհին:

Լուսինե Զաքարյանը հայ հնագույն և միջնադարյան երգերի հնուտ գիտակ և մեկնիչ խորեն Պալյանի օգնությամբ, հոգևոր ու ժողովրդական երգերը կատարում էր գունարտահայտչական ինքնատիպությամբ կենդանի շունչ ու ոգի հաղորդելով յուրաքանչյուր հնչյունի ու բառի: «Արի Աստված, հարցն մերոց, որ ապավենդ ես մեղելոց...»: Երգչուհին, որ երկրի բեմից էլ երգում էր՝ օտար հանդիսատեսի սրտում մի նոր Հայաստան էր բացահայտում: Նրա երգա-

ցանկը բազմահարուստ ընդգրկում ուներ: Նրա սուպրանոյի գեղեցկությամբ ցնցվել են հայտնի երաժիշտներ, կոմպոզիտորներ: Շատ հայտնի մեծեր են Լուսինեին համարել հայոց արվեստի ամենաեզակի երևույթներից մեկը: Հատկապես հուզիչ է ռուս բանաստեղծ Եգոր Իսակի մամուլում գրած խոսքը: «Լուսինե Զաքարյանի ծայրը ոչ միայն սրտից էր գալիս, այլ նաև հայոց երգի կարոտի խորքից: Ու միայն սոխակի կոկորդից ելնող դայլայլ չէր, նաև այն դարերի խորքից եկած պատմություն, հուշ, լեզուն էր: Ես շնորհակալ եմ այս ծայրից, նա մի նոր Հայաստան բացեց ինձ համար»: Լուսինե երգում էր շուրջ տասնհինգ լեզվով, բայց... իր էության լիակատար նվիրումը, գերազույժ տալիս էր հայ երգին, որի համար էլ մեծերի՝ Արամ Խաչատրյանի, Առնո Բաբաջանյանի, Պարույր Սևակի, Սիլվա Կապուտիկյանի, Վեհափառ Վազգեն Առաքելի շնորհավորանքի ու գնահատանքի խոսքերն էր լսում: Երգչուհին իր արտասահմանյան շրջագայություններում, օտարներին ու համերկացիներին երգով պատմում էր հայ ժողովրդի հազարամյակների պատմությունը, նրա հարուստ ոգեղենը ներկայացնում Աստվածային հնչողությամբ: «Հայաստան, երկիր դրախտավայր, դու մարդկային ցեղի օրրան, դու և բնիկ իմ Հայրենիք, իմ Հայրենիք, Հայաստան»: Մեր գրույցի ընթացքում խորեն Պալյանը հիշում էր: «Լուսինե որևէ տեղ հենց տեսնում էր խաչքար, կամ որևէ փլված վանքի պատ, ծունկի էր գալիս, համբուրում դրանք, մոմ վառում, նրա հավատը ֆանատիզմի էր հասնում, իր աշխատավարձի մեծ մասը ծախսում էր մոմերի ու կարիքյալ մարդկանց համար, նա անսահման բարի լինելուց գատ, խղճով էր, հասարակ, մարդամոտ ու անմիջական»: 1937 թվականի հունիսի 1-ին ծնված Լուսինե մանկուց երգել, արտասանել, համերգներ է ներկայացրել հարազատներին, հարևաններին: Ապագա երգչուհին թիվ 4 ռուսական դպրոցի ինքնագործ խմբում դրսևորելով

երգելու շնորհ սովորում է քաղաքի երաժշտական դպրոցում: Ահավասիկ, Ախալցխայում, մի փոքրիկ դրվագ երգչուհու մանկությունից: Փոցխով գետի հեղեղումներից մեկի ժամանակ, փոքրիկ աղջնակը (որի իսկական անունը Ավետլանա էր), կամուրջից անցնելուց ընկնում է ջուրը, երբ նրան փրկում են խեղդվելուց, տեսնում են, որ նա իր պայուսակի բռնակից ամուր կառչած՝ սրբաբացել է վախից՝ հանկարծ չկորցնի պայուսակը և ջրի սառնությունից սարսափել...: 1952 թ. նրանց ընտանիքը տեղափոխվում է Երևան: Ռոմանոս Մելիքյանի ուսումնարանն ավարտելուց հետո և Կոմիտասի անվան կոնսերվատորիայի մեներգեցողության բաժինը, այնուհետև Սուրբ Էջմիածնում հոգևոր ուսումնարանը նախախնամության կողմից կանխորոշվեց: Ճակատագրական էր, նա պիտի Աստվածամոր շուրթերից աղերսվող խոսքի անզուգական մեկնիչը դառնար ողջ հայոց համար, թե՛ սփյուռքի բեմերում, թե՛ հայ մարդու հոգում... որը նաև հետագայում դառնալու էր սեր, կարոտ, հայրենասիրություն: Ի վերջո, նրա անկրկնելի կատարումները հայ երգասերների սրտում մնացին որպես լույս մեղեդիներ: Տա Աստված, զոնե կես դարը մեկ հայոց ազգն ունենա Լուսինե Զաքարյանի նման երգչուհիներ, երանք, նորից նրա հեզասահ, մեղմիվ երգի «Կռունկի» պես թևածի աշխարհով մեկ նոր «կռունկ» միայն «Արի տուն» վերադարձի կոչ անի բոլոր գնացողներին:

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՓՈՒԶԱՆ
«Մեծաց շարունակվող գրուցաշար.
Զրույցներ, դիմապատկերներ, խոհեր...» գրքից

ԼՈՒՍԻՆԵՆ ԿՎՊԸ ԵՐԿՆԵՐԻ ՈՒ ԵՐԳԻ ՀԵՏ ԷՐ Զրույց ԽՈՐԵՆ ՊՂԵՂՆԻ ՀԵՏ

- Դուք Լուսինե Զաքարյանի հետ ապրել եք ստեղծագործական հարուստ մի կյանք. Ձեր ապրած յուրաքանչյուր օրը եղել է կենսապատում, հիշեք անցյալի որևէ հետաքրքիր էջ:

- Լուսինե արտասովոր սեր ուներ հանդեպ իր ծննդավայր Ախալցխայի: Երբեմն ես նրա հոգու հետ խաղում էի՝ ասելով ձեր գյուղը... Նա վեր էր թռչում ձեր գյուղը չասես, Ախալցխան քաղաք է: 1982 թ. նոր էր լույս տեսել Կարլեն Դանիելյանի՝ «Լուսինե Զաքարյան» գիրքը. այդ տարի որոշեցիմք գնալ Ախալցխա: Երեկոյան ժամը 5-ն էր. մեզ դիմավորեցին ողջ Զավախի ղեկավարությունը, մտավորականները, դատախազներն ու ոստիկանապետները. նրանց մեջ էր մեր ընկերը մանկավարժ Կիմ Ավագյանը (մենք նրա տանը հյուրընկալվեցինք): Մտանք մի խանութ, տղաներից մեկը վաճառողին կատակով դիմեց Լուսինեի լուսանկարը չե՞ք վաճառում: Իսկ նա պատասխանեց. «Դու խե՞ղ՞ք ես, գիտե՞ս ինչ դժվարությամբ եմ ձեռք բերել և ինչ ճանապարհներով»: Տղան ծիծաղեց. «Լավ, լավ, ուզում ես, հենց հիմա գնա՞մ և Լուսինեին ներս բերեմ, ու դու տեսնես»: Նա էլ թե խելագար ես, ինչ է, Լուսինե միլիոն կիլոմետր հեռու է մեզանից»: Երբ երիտասարդը գնաց և բերեց Լուսինեին ներս, այդ մարդը ձեռք ու ոտք ընկավ, ներողություն խնդրեց, լացեց «ես քու արևին մեռնեմ, Լուսինե, իմ պաշտամունք»: Մենք Կիմեցն տանն էինք մնում Մեծ Պամած գյուղում: Եվ քանի որ գյուղը դահլիճ չուներ, մենք մեր համերգը տվեցինք նրանց այգում, պատշգամբում երգում էինք, իսկ դիմացը կանաչ-կանաչ էր: Հարյուրավոր ունկնդիրներ մտած էին գետնի վրա: Մենք ուրախ էինք, Լուսինե ասում էր աշխարհում այնքան շատ համերգներ եմ տվել, այս ուրիշ էր ինձ համար, այսպիսի ակուստիկան չտեսնված է: Հետո ղեկավարության թույլտվությամբ հաջորդ օրը հայտարարվեց, որ համերգ պիտի լինի. չգործող եկեղեցին բացեցին, լվացին, կարգի բերին, մենք համերգ տվինք 1-2 անգամ: Ժողովուրդը գալիս էր եկեղեցու զանգերի դողանքից: Կիրակի օրը Ախալցխայի մայր եկեղեցում Լուսինե անցեց «Սուրբ-սուրբը», «Պատարագը»: Այնտեղ նույնպես տեղ Ռուբեն քահանայի զխալորությամբ ծիսակատարություն

եղավ, կանայք, երեխաներ, երիտասարդներ էին հավաքվում: Մենք եղանք պատմական Վարժայում, Թամարա թագուհու եկեղեցում Լուսինե 2-3 երգ երգեց, եկան ղեկավարներ (վրացիներ, այլազգիներ), համբուրեցին, ծնկի եկան, հիացմունքով ասին՝ այս ինչ երգեր են, մենք այսպիսի ծայն չենք լսել, ի՞նչ հրաշք է...
- Նրա աստվածապաշտ լինելը մանկությունից էր գալիս, թե՛ հետագայում ձևավորվեց, երբ նա մայր Տաճարում սկսեց հոգևոր երգեր կատարել:
- Լուսինե կնքվել է կաթոլիկ «Իվլիտա» եկեղեցում: Հետագայում իր կաթոլիկական մկրտությունն ստանալու համար ասում էր. «Կարևորը մկրտվել էմ: Իսկ երկրորդ անգամ այդ խորհուրդը չի կարելի կրկնել»: Նա հզոր հավատը ուներ, Լուսինեի համար էջմիածինը շատ բան արեց, իսկ ինքը՝ էջմիածին համար ևս արեց մեծ գործ: Մեր երիտասարդներն այդ տարիներին կտրված էին ամեն ինչից՝ կիրակի օրերին գնում էին տաճար, սյունիների հետևում լսում էին Լուսինեին և մաքրված դուրս էին գալիս: Նրա մոտ ֆանատիզմը այնքան խորն էր, որ գիշերը մինչև 12-1-ը աղոթում էր. նա ուժ չուներ, որ կարողանար դիմադրել, հաղթահարել այդ ֆանատիզմին, նա ահավոր հավատացյալ էր:
- Եկնալյանի, Կոմիտասի հոգևոր երգերի շարունակողն էր Լուսինե Զաքարյանը: Վերջինիս արվեստը շարունակող, թերևս Դուք տեսնո՞ւմ եք այսօրվա երգարվեստում:
- Ես ընդհանրապես երգիչ չեմ տեսնում: Երբ ասում են աստղաբույլը ելույթ ունեցավ, զարմանում եմ, այն մարդիկ, ովքեր բացարձակ ազգային տոհմիկ երաժշտության մասին տեղեկություն չունեն, մեղեդի չկա իրենց գրած երգի մեջ (տեքստերը ցածր մակարդակի բառեր ունեն), դրանք կոչվում են աստղե՞ր... Ժիճաղելի է, «Սոնտե Կառլո» լսելով մարդ կարո՞ղ է հայերեն երգ գրել:
- Այսօր երգերի մեջ, երաժշտության մեջ օտարամուտ ծայրեր կան. մեղեդին հայկական չէ, աղմկոտ է այն:
- Բողոքում եմ ամբողջ սրտով ու հոգով: Այս վերջին տարիներին մենք շատ բան ենք կորցրել, որոնց մեջ ամենամեծն ազգային երաժշտության կորուստն է: Օրինակ, չկա-

րողացանք Արամ Խաչատրյանի հորելյանի առթիվ կարգին երկեր կազմակերպել, այդպես չեն մեծարում համաշխարհային մեծություն ներկայացնող կոմպոզիտորին:
- Հայկական խոհանոցի հանդեպ ի՞նչ վերաբերմունք ուներ Լուսինե Զաքարյանը և ի՞նչ խորեն Պալյանը:
- Մեր միության հարցում ամենամեծ գործն Աստված է արել. Լուսինե եթե հանդիպեր ուրիշ մեկի իր նման մի քիչ անճարի հակառակը երևի թե նախ ընտանիք չէր լինի, և Լուսինե Զաքարյան չէր լինի: Ես նրա համար ստեղծել եմ բարձր, հանգիստ պայմաններ, որպեսզի ինքը միայն իր երգով զբաղվեր: Ես տանն ամեն ինչ անում էի, ինքն ասում էր մեկ-մեկ ես օգնում եմ:
- Նրա բեմական հազուստը, զարդարանքը, շպարը, որոնք այնքան ծաշակով ու յուրատիպ էին, ի՞նքն էր ընտրում, թե՞ Դուք էիք դիզայնը կազմակերպում:
- Այդ հարցում ինքն ուներ նախասիրություններ, բայց մի քիչ էլ մոլորություններ ուներ գույների հանդեպ: Մի ժամանակ սիրում էր կարմիր, հետո փոխեց կապույտ, որի համար ուշքը գնում էր, մատանին կապույտ, օղերը, հագուստը, գուլպաները... Ուներ և լավ ծաշակ, և ընկերուհիներ, ովքեր հետևում էին այդ բոլորին: Նա քչով բավարարվում էր, սակավապես էր ամեն հարցում: Լուսինե արտասահման էր գնում, իր համար ոչ մի բան չէր գնում, իր հարազատների համար էլ որոշ բաներ էր բերում: Նա ինքն էր ու իր երգը. Լուսինեի կապը երկնքի հետ էր ու գետնի վրա միայն երգի հետ էր, այլ հետաքրքրություն նա չուներ: Նա 30 տարի շաքարախոտով բեմում երգեց, որը հազվագյուտ բան էր աշխարհում: Նա երգելիս առյուծ էր կտրում, համերգից հետո արդեն մաքուր դիակ էր դառնում, երգը նրան կենդանացնում, ուժ էր տալիս, երգից բացի, սիրում էր Աստծուն, Հայ ժողովրդին, և Հայաստան աշխարհը:

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՓՈՒԶԱՆ
Հարցազրույց խորեն Պալյանի հետ՝
«Մեծաց շարունակվող գրուցաշար.
Զրույցներ, դիմապատկերներ, խոհեր...» գրքից

В РЦНК в Ереване отметили 180-летие М. Мусоргского

Ведущая вечера – музыковед, заведующая музеем Ереванской Государственной Консерватории им. Комитаса Нана Маргарян представила собравшимся малоизвестные факты из жизни и творчества композитора, его весомый вклад в богатое наследие русской композиторской школы. Увлекательная информация была проиллюстрирована аудио- и видеоматериалами известных произведений М. Мусоргского: “Ночь на Лысой горе”, вступление к опере “Хованщина” – “Рассвет на Москва – реке”, цикл фортепианных пьес “Картины с выставки”, “Блоха” в исполнении Федора Шаляпина, сцена Бориса Годунова и князя Шуйского из оперы “Борис Годунов” в исполнении Александра Пирогова и Никандра Ханаева.

В завершение вечера Нана Маргарян презентовала уникальный “Юбилейный сборник” избранных песен М. Мусоргского (1931 года издания), который был передан музеем

Ереванской консерватории из личного архива одного из основоположников армянской советской композиторской школы Григора Егизаряна. После чего из представленного сборника Мусоргского Нана Маргарян исполнила песню “Калистрат” на слова Н. Некрасова, в сопровождении концертмейстера Анны Джаладяна. На вечере присутствовали учащиеся ереванской музыкальной школы им. А.Цицикян, поклонники русской классической музыки.



Լիտերատուրո-մուզիկալ Վեճըր “Վոջրոճենիե” վ Րոսսիյսկոմ շենթրե նաուկ և կուլտուրյի վ Երեվանե

"ГАРМОНИЯ КАК ИСТОЧНИК БЫТИЯ"



Էդուարդ Գրիգորևիչ Այրապետյան

Изучая музыку, хочется изведать все грани творчества великих композиторов, и, оглядываясь назад, пролистать лучшие страницы музыкального искусства. Однако на все это требуется время и особая подготовка, благодаря которой со временем каждый музыковед сумеет достичь определенного профессионального уровня.

Сегодня, в дни нескончаемого информационного потока, кажется, что можно найти ответ на любой вопрос, но заглядывая вглубь истины и погружаясь в божественный мир музыки, многие вопросы, к счастью, остаются неразгаданными.

В данной же теме нам следует понять, что собою представляет павана и какое значение она приобрела в сочинении Эдуарда Айрапетяна. Но для начала несколько сведений о композиторе: Айрапетян Эдуард Григорьевич (род. 1949, Ереван), в 1973 году окончил Ереванскую консерваторию по классу Г. И. Егизаряна. Основные сочинения: оратория "1915" (памяти жертв Геноцида, 1977), 3 симфонии (1985-99), камерная симфония "Нарцисс" (1978), инструментальные концерты с оркестром: 6 - для скрипки (1973-95), 2 - для альты (1983, 1993), 3 - для виолончели (1981-1993), для фортепиано (1994), кларнета (1991), гобоя (1992), фагота (1994), для скрипки и альты (1997); 1. Саркисян С., Ностальгический романтизм Э. Айрапетяна. //Музыкальная академия., 2000.). Немного о паване: — это торжественный медленный танец, распространенный в Европе в XVI-XVII вв. Под музыку паваны происходили различные церемониальные шествия: въезды властей в город, проводы знатной невесты в церковь.

По одной версии, павана или падована (итал. padovana) появилась в итальянском городе Падуа (итал. Padova), по которому и получила свое название. По другой версии, это танец испанского происхождения (исп. pavana, от лат. pavo - павлин), и название связано с его торжественным церемониальным характером. Возможно, что падована существовала одновременно с паваной, но это был совершенно другой танец: быстрый, с размером на 6/8 либо 12/8, схожий с гальярдой или сальтарелло. Возможно также, что термин "падована" объединял павану и ее более позднюю разновидность пассамеццо.

Были известны испанская, итальянская, французская и немецкая типы паваны, различающиеся своим характером. Исследователи считают, что более вероятно итальянское происхождение танца. Туано Арбо в своем труде "Оркезграфия" (1589) сообщал, что павана пришла во Францию из Испании при Генрихе III. В труде Жоржа Дера говорится, что павана-танец французского происхождения, вывезенный из Франции в 1574 году и что описание паваны у Туано Арбо сильно отличается от описания испанских паван, которые исполняются более оживленно.

Павана-придворный танец, который давал возможность показать изящество манер и движений; в народе его не танцевали. Кавалеры исполняли павану при шпаге, в плащах, дамы - в парадных платьях со шлейфами. В паване, в отличие от бранлей, где только темп объединял танцующих, фигуры соответствуют музыкальным фразам.

Типичные черты паваны:

- медленный темп;
- двудольный метр на 2/4, 4/4 или 4/2;
- торжественно-величавый характер;
- двухчастная форма;
- преимущественно аккордовое изложение, в которое иногда добавляются пассажи;
- музыкальное сопровождение исполняется гобоями и тромбонами при поддержке барабана, подчеркивающего ритм танца.

Паваны часто встречались в сборниках для лютни, клавира или консортов. Раннее паваны сочиняли Пьер Аттеньян, Клод Жервез, Энтони Холборн, Уильям Бурд, Томас Морли, Ян Свелинк, Джон Дауленд, Орландо Гиббонс, Иоганн Шейн, Самуэль Шейдт, Якоб ван Эйк. Танец встречается и в творчестве композиторов XIX-XX веков: паваны в операх Камилла Сен-Санса "Этьенн Марсель" (1878) и "Прозерпина" (1887), Павана для хора с оркестром Габриэля Форе (1887), "Павана на смерть инфанты" фортепианная пьеса Мориса Равеля (1899, оркестрована в 1910), павана из балета "Иов" Р. Воана-Уильямса (1931), павана из балета "Золушка" Сергея Прокофьева (3-я сюита, номер 1), павана из альбома "Сарабанда" Джона Лорда (1976).

Интересным открытием для нас стала "Павана" для камерного оркестра Эдуарда Айрапетяна (сочиненная в 2015). Абстрактность мышления поразила, а мелодичность позволила осознать важность данного сочинения. "В стилистическом отношении свойства абстрактного мышления проявились по-разному. Можно добавить, что и степень абстрактной выразительности была различной. Индивидуализирование функции ритма, звука, интервала, регистра, громкостной динамики, варьированных конструкций, фактуры и движения, и это направление в армянской музыке самобытно развивали многие, в первую очередь: Левон Аствацатурян, Ашот Зограбян, Эдуард Айрапетян" (2. Саркисян С., Армянская музыка в контексте XX века, Исследование., М., 2002. С.15).

И действительно, "Павана" Айрапетяна удивительна по восприятию и необычна по фактуре, и первое, что становится очевидным при изучении материала, так это определенная схожесть с "Паваной на смерть инфанты" французского композитора Мориса Равеля (1875 - 1937), кому, собственно, и посвящено сочинение. Схожесть сочинений проявляется в динамике и общей обрисовке мелодического замысла. Как было сказано, павана - торжественный танец, но в сочинениях обоих композиторов внешней торжественности нет. Тем самым, можно предположить, что этот танец перерождается в нечто более важное и "торжественное", важное скорее по глубине восприятия и по драматургии сочинения. Об этом говорят уже первые фразы вступления в партии флейты и уносящие слушателя в глубокий мир фантазий и иллюзий. А крайние звуки фраз, словно обрамляющие септаккорды и нонаккорды (столь свой-

ственные импрессионистам), создают ощущение абсолютной гармонии человека с природой и окружающей средой. Все сочинение в основном звучит на *p* или *pp*, что придает общему замыслу некую тревожность и загадочность. Сам оттенок динамики на пиано, некой приглушенности, таинственности роднит "Павану" Айрапетяна с сочинениями импрессионистов, а вступление воспринимается как ветер, рисующий "изгибы" по морским волнам.

Далее появляется первая тема. Она звучит тревожно, отрывисто, будто задает слушателю один вопрос, тот самый, что таится в душе почти каждого человека, но не смеет высказаться вслух.

В процессе приближения ко второй теме, фактура становится более насыщенной, и мотивы попеременно звучат у группы деревянных духовых. Интересно отметить линию у контрабасов, напоминающую хроматические ходы во вступлении.

Небольшое "вступление" предваряет *Adagio*, возвращающее к первой теме. Однако тема видоизменяется. Подготовка к репризе отличается темповой неустойчивостью.

Здесь слышатся отголоски темы, а остинатный бас заполняет струнная группа первоначальными, уже знакомыми на слух триольными аккордами на *ppp*. В финале все идет на спад, но в то же время замирает в высоте, и это одна из особенностей сочинений Айрапетяна.

В "Паване" Айрапетяна сохраняется размер 4/4, медленный темп, аккордовое изложение, изменяется форма и характер: с двумя разделами во второй части и короткой репризой, трехчастная, а вместо торжественно-величавого характера - преобладает красочно-жанровое, пейзажное начало. Заметно в сочинении Айрапетяна и столь свойственное импрессионистам богатое гармоническое и тембровое окрашивание тем. Импрессионистская гармония характеризуется резким повышением колористического, самодовлеющего компонента звука. Инструментовка импрессионистов характеризуется сокращением размеров традиционного классического оркестра; в "Паване" Айрапетяна оркестровый состав включает деревянно-духовую и струнную группы. Трудно не заметить и прозрачность, тембровый контраст и тонкость детальной проработки фактуры. "Павану" Айрапетяна по стилю можно назвать импрессионистической, однако глубиной и манерой высказывания, несомненно, она выходит за данную характеристику.

Самое ценное, что возникло за время изучения "Паваны" - это желание и дальше изучать сочинения Эдуарда Айрапетяна, и каждый раз, находя в разных стилистических исканиях тот самый тонкий, ювелирный почерк композитора, изумляться, поскольку каждое произведение, написанное пером соотечественника, вдохновляет, радует и дает надежду на лучшее музыкальное будущее.

ЛИАНА ЕГИАЗАРЯН
музыковед, студентка 4-го курса ЕГК

Միգրյառում Մոսկվայում նվիրված Կոմիտասի ծննդյան 150-ամյա հորեյանին



ՌԴ-ում ԳԳ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի աշխատակազմը տնօրեն՝ Շողիկ Հայկազի Փահլևանյան, Մոսկվայի դուդուկի դպրոցի անսամբլ, տնօրեն՝ Հովհաննես Ղազարյան



ՌԴ-ում ԳԳ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի աշխատակազմը, սաները

ՌԴ-ում ԳԳ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Հայկազի Փահլևանյանի նախաձեռնությամբ անցկացվեց միջոցառում՝ նվիրված մեծանուն հայ կոմպոզիտոր Կոմիտասի ծննդյան 150-ամյա հորեյանին: Կիրակնօրյա դպրոցի սաները շնորհանդեսի միջոցով

տեղեկացան Կոմիտասի կյանքին և գործունեությանն ու ծանոթացան հայկական ժողովրդական երաժշտական գործիքներին: Մոսկվայի դուդուկի դպրոցի տնօրեն, մանկավարժ Հովհաննես Ղազարյանի և իր անսամբլի Կոմիտասի ստեղծագործությունների կատարմամբ ավարտվեց միջոցառումը: Հավելենք, որ Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կի-

րակնօրյա դպրոցի հայկական երգերի ուսուցչուհի Արփի Սամվելյանը և իրավորված հյուր Հովհաննես Ղազարյանը երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտներ են:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Անդունդի եզրին՝ կյանքի անդին»

1 Սովորելու տարիներին ծանոթացա մի երիտասարդի հետ, ով առաջին իսկ շփուկից հետո գերեց իր զգացմունքայնությամբ և ճշմարտախոսությամբ. նա նվագում էր տրոմբոն, իսկ ավելի ուշ, 2017-ին, երբ նա հրավիրեց ինձ և մի շարք ուսանողների իր առաջին դաշնամուրային մենահամերգի կոնսերվատորիայի դահլիճում, ինձ մոտ հարց առաջացավ՝ թե ինչո՞ւ հենց դաշնամուր: Իհարկե, ցանկացած երաժշտի և առհասարակ բազմակողմանի զարգացած մարդու համար մի քանի երաժշտական գործիքի տիրապետելը՝ նորմալ երևույթ է. հարցն այլ է: Լսելով իր կատարմամբ Կոմիտասի «Յոթ պար»ը և այլ ստեղծագործություններ, զարմացա, թե ինչպես է տրոմբոնահարը զգում նաև դաշնամուրը, իսկ ավելի ուշ կարծեցի, որ դաշնամուրը պարզապես ինքնարտահայտման ձևերից է: Այդ մենահամերգից հետո ցանկություն առաջացավ նորից ու նորից լսելու նրա կատարումները: Իսկ 2019-ի մարտի 29-ին կայացած նրա մենահամերգից հետո, որոշեցի կիսվել իմ տպավորություններով նաև կարդացողների հետ:

Երիտասարդը՝ ԵՊԿ-ի փողային բաժնի 4-րդ կուրսի ուսանող՝ Նարեկ Գրուբյանյանն է: Ծնվել է Երևանում: Սիրում է կարդալ, նվագել, խորհել, ստեղծագործել, դասավանդել... այո, սիրում է կյանքի ամեն վարկյանը. սիրում է այն ամենն ինչով զբաղվում է, և սիրո շնորհիվ է շարունակում կյանքին նայել ժպիտով: Եվ, չէ՛ որ սերն է առաջնային պայմանը արվեստում և կյանքում...

Ավարտել է Չայկովսկու անվ. երաժշտական դպրոցի փողային բաժինը տրոմբոնահարի մասնագիտությամբ, իսկ սկսել է դաշնամուրով նվագել 13 տարեկանից: 2015-ին ծանոթացել է ԵՊԱՀ համալսարանի դասախոս դոցենտ Մարինա Ստեփանյանի հետ և իրենից դաշնամուրի դասեր վերցրել, և, ինչպես ասում է Նարեկը՝ «ու այդ ժամանակ հասկացա, որ ես անպայման պետք է շարունակեմ ու ավելի լավ

տիրապետեմ գործիքով նվագելուն»: Եվ այդպես էլ եղավ տարիներ հետո: 2016-2018 թթ. սովորել է նաև ԵՊԿ դոցենտ Մարգարիտ Սարգսյանի մոտ: 2018 թ. կայացավ Նարեկի երկրորդ դաշնամուրային համերգը Չարենցի անվ. տուն-թանգարանում, իսկ 2019 թ. մարտի 29-ին՝ երրորդ մենահամերգը կոնսերվատորիայի դահլիճում: Այդ տարիներին Նարեկը արժանացել է տարբեր մրցանակների՝ 2017-ի «Սայաթ-Նովա» մրցույթում՝ 2-րդ, 2017 և 2018-ին՝ «Արտ-մյուզիք» արվեստի միջազգային մրցույթ-փառատոնին արժանացել 3-րդ մրցանակների: Սակայն իմ համոզմամբ, ցանկացած արտիստի համար ամենամեծ մրցանակը՝ հասնողիստեսի սերն է հասած կատարողին և արտահայտած ինչպես լռությամբ, այնպես էլ շնորհակալությամբ:

Վերջին մենահամերգի ծրագրում Նարեկը կատարեց Յ. Ս. Բախի լյա մինոր Պրեյլուդ և ֆուգան, ռե մինոր, Պարտիտան N 2 (4 մաս), Ֆ. Շոբերտի Էքսպրոմտը (Սի-բեմոլ մաժոր), Ֆ. Շոպենի Նոկտյուրնը (մի-մինոր, ֆա-մինոր), Պոլոնեզը (լյա մաժոր), և Ա. Խաչատրյանի ստեղծագործությունները՝ Տոկկատը, Պոենը:

Գաղտնիք չէ, որ բոլորին հայտնի ստեղծագործություններ կատարելն էլ ավելի է բարդացնում կատարողի աշխատանքը, սակայն Նարեկը հաղթահարեց ինչպես տեխնիկական բարդությունները, այնպես էլ գեղարվեստական: Պրոֆեսիոնալ կատարողներից շատերը հաճախակի են նշում, որ Շոպենի, Չայկովսկու, Բրամսի և այլ կոմպոզիտորների գործերը հարկավոր է կատարել հասուն տարիքում, և իրենք, իհարկե, ճիշտ են, սակայն ես կարծում եմ, որ երիտասարդների կատարմամբ այդպիսի գործերը նոր շունչ են ստանում և նոր լիցքեր հաղորդում թե՛ կատարողին, թե՛ ունկնդրին: Իհարկե, նվագում զգացվում էր որոշակի չորություն, որը բնավ կապված չէ տրոմբոնահար լինելու հետ. ես համոզված եմ, որ այդ տեսակի չորությունը անմիջական

արտացոլումն է այդ երիտասարդի բնավորության և էության որոշ գծերի:

Մենահամերգի վերջում Նարեկը կատարեց իր ստեղծագործությունը «Անդունդի եզրին՝ կյանքից այնդին» անվանումով: Այս ստեղծագործությունը վառ արտահայտում է Նարեկի զգացմունքայնությունը և մտքի խորությունը: Ստեղծագործության մեջ կային որոշակի փիլիսոփայական տարրեր, իսկ ամբողջ գործի լուսավոր մասը՝ միջին հատվածում էր ներկայացված, հայկական մեղեդիով: Ցավոք, դեռ չեն հասցրել մանրակրկիտ ուսումնասիրել այն, բայց չեմ կարող չնշել, որ այդ հայկական ժամանակակից ստեղծագործությունը մեծ տպավորություն գործեց ինձ վրա և մոտ ժամանակներում, հուսով եմ, նոտաները կհայտնվեն իմ ձեռքում:

Նարեկի ելույթի ժամանակ, ես ստացա ոչ միայն մեծ բավականություն, այլև կատարողական արվեստի պահանջներից ամենակարևորը՝ անկեղծությունը: Հանդիսատեսը երբևէ չի հուզվի, եթե չհուզվի կատարողը: Կարողացող երբևէ չի ծիծաղի, եթե չծիծաղի գրողը: Մինչև մենք ինքներս չգտնենք կյանքում այն, ինչ կշարժի մեր հոգու նուրբ լարերը՝ մենք երբևէ չենք կարողանա ասարեցնել դիմացինի հոգին:

Գ. Գ. Վերջերս իմացա, որ ԵՊԿ-ում սովորող իմ դասընկերներից շատերն, այդ թվում և Նարեկը այս տարի գնալու են բանակ: Մեր քաջ հայ տղաները, Հայրենիքի պաշտպանները... թող Աստուծո օրհնությունը անբաժան լինի նրանցից, իսկ ես՝ կսպասեմ մեր տղաների վերադարձին, որպեսզի մի քանի տարի հետո նորից հրավիրված լինեմ նրանց համերգին և սիրով վայելեմ այն:

ԼԻԱՆԱ ԵՐԱՋԱՐՅԱՆ
Երաժշտագիտության բաժնի
4-րդ կուրսի ուսանողուհի

ԽՂՈՒՄԻ ԿՐԻՍՏՈՒՆՆԵՐԸ ԵՒ ՀՂՅԱԿՎԱԿՆ ԵՐԱԺՇՏԱԿԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

1948 թվականի ապրիլի 2-ին խաչատուր Արուսյանը դուրս եկավ տանից և այլևս չվերադարձավ

Հարգելի ընթերցող, ստորև ներկայացվող սույն թեմային առնչվող առաջին տպագրությունն է և թվով իմ 3-րդ գեկուցման նյութն է:

Մեկ տարի է անցել այն օրվանից, երբ ես Կոմիտաս Վարդապետի երաժշտագիտական գործունեությանը նվիրված իմ գեկույցում, անդրադարձա նաև Խ. Արուսյանի գործունեության այս ոլորտին, որն, ինչ խոսք, քչերին է հայտնի: Այնուհետև տարբեր գեկույցներով հանդես եմ եկել Խ. Արուսյանի տուն-թանգարանում (2018 թ. հոկտեմբերի 15-ին) և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ Ուսանողական գիտական ստեղծագործական ընկերության կողմից կազմակերպված կոնֆերանսի ժամանակ (2018 թ. նոյեմբերի 20-ին): Անկեղծորեն պետք է նշեմ, որ նշածս ելույթների ունկնդրի արձագանքները մեծ մասամբ եղել են դրական և ոգևորող: Այս փաստն ինձ պարտադրում է շարունակել սույն թեմայի ուսումնասիրության ընթացքը:

Ուսումնասիրության ամբողջ ընթացքում մեծ աջակցություն է ցուցաբերել ուսուցչուհին՝ երաժշտագետ Հռիփսիմե Սկրտչյանը, որի համար հայտնում եմ խորին շնորհակալություն և հողվածի տպագրությունը նվիրում եմ նրան: Շնորհակալություն եմ հայտնում նաև Խ. Արուսյանի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ Մարինա Բաղդասարյանին, արվեստագիտական մի շարք նյութեր տրամադրելու համար, ինչպես նաև երաժշտագետներ արվեստագիտության թեկնածու Ալինա Փահլևանյանին, Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի ակադեմիայի Երաժշտական ֆոնդի ավագ գիտաշխատող Մարինե Մուշեղյանին, արվեստագիտության թեկնածուներ՝ Մարինա Տիգրանյանին և Գայանե Ամիրադյանին ցուցաբերած աջակցության համար:

Իրականում, տպագրության համար նախահեսված է ծավալուն հողված, որն հրատարակման է հանձնված: Նպատակ է, որպեսզի ներկայացվող նյութը որոշակիորեն պատկերացում ստեղծի Խ. Արուսյանի երաժշտական գործունեության մասին:

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
13. ապրիլ. 2019 թ., ք. Երևան

Հայ նոր գրականության հիմնադիր, գրող, բանասեր, ազգագրագետ, Մեծ լուսավորիչ Խաչատուր Արուսյանի (1809-1848 թթ.) կյանքը և գործունեության լայն ընդգրկումը ներկայացնող և լուսաբանող ուսումնասիրությունների միջոցով որոշակիորեն պատկերացում է ստեղծվում հանձարեղ գրողի մասին: Սակայն այդ բազմաբովանդակ ուսումնասիրությունները մինչ օրս լիարժեքորեն չեն բացահայտում Մեծ Լուսավորչի կյանքի որոշ դրվագներ: Մինչ այժմ էլ

արվեստագիտական մի շարք հարցեր և խնդիրներ կարող են ուսումնասիրման: Վստահորեն կարող ենք փաստել, որ այդպիսի հարցերի թվին է պատկանում նաև «Խ. Արուսյանը և երաժշտությունը» թեման: Ցավոք սրտի, Խ. Արուսյանի գործունեության այս ոլորտը մինչ օրս ըստ արժանվույն ուսումնասիրված չէ: Առաջին հեղինակը ով անդրադարձել է Արուսյանի գործունեության այս ոլորտին արվեստագետ Պիոն Հակոբյանն (1926-2000 թթ.): Ե. Նա 1955 թ. հրատարակել է իր «Խաչատուր Արուսյանը և երաժշտությունը (նյութեր ապագա ուսումնասիրության համար)» հողվածը (Պ. Հակոբյան՝ «Խաչատուր Արուսյանը և երաժշտությունը», //Սովետական արվեստ, 1955 թ. N 5, էջ 6-12):

Հեղինակը հողվածի վերջում գրում. «Արուսյանը և երաժշտությունը թեմային մենք մոտեցանք իբրև բանասեր: Դրա մասնագիտական քննությունը մնում է հայ երաժշտության պատմաբաններին»:

Ճիշտ է, Խ. Արուսյանի գործունեության այս ոլորտին առնչվող մի շարք հետաքրքրական նյութեր կան, որոնց շնորհիվ ակնհայտ է դառնում այս թեմայի ուսումնասիրության կարևորությունը մեր օրերում, սակայն պիտի փաստենք, որ ամեն ինչի մասին խոսելը շատ հեռուն կտաներ: Այդ իսկ պատճառով, մենք կփորձենք ներկայացնել միայն Խ. Արուսյանի դերը հայկական երաժշտական մշակության:

Խ. Արուսյանը երաժշտության վերաբերյալ առաջին գիտելիքները ստացել է իր հայրենի գյուղում՝ Քանաքեռում, տեղի գեղջուկ բանասացներից: Գյուղում, ինչպես բոլոր գեղջուկ մանուկները, մանուկ Խաչատուրը ևս մասնակցել է գյուղական կյանքի բոլոր իրադարձություններին՝ ծիսական արարողություններին, ժողովրդական հանդիսություններին, ինչպես նաև կենցաղային այլ և այլ աշխատանքներին:

Հայ-ուսական համալսարանի Ֆրանսիական երգի ամենամյա միզագային փառատոնը՝ նվիրված Շառլ Ավանվուրի հիշատակին

1 Մարտի 28-ին, լեզենդար ֆրանսիական արվեստին եմ անդրադարձել Հայ-Ռուսական համալսարանում՝ ֆրանսիական երգի ամենամյա միջուկական փառատոնի շրջանակում: Փառատոնն այս տարի նվիրված էր Շառլ Ավանվուրի հիշատակին:

ԵՊՀ-ի, ԵՊԼՀ-ի, Ֆրանսիական և Ամերիկյան համալսարանների, Երևանի ճարտարագիտական համալսարանի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, ԵՊԿ-ի, Շիրակի պետական համալսարանի ուսանողները մասնակցեցին մրցույթի՝ ներկայացնելով ֆրանսալեզու հայտնի երգեր: Միջոցառման ընթացքում հնչեցին Շառլ Ավանվուրի ամենահայտնի հիթերը՝ «La Boheme», «La Mama», «Ave Maria», «Un vie damour» երգերը:

Միջոցառմանը ներկա էր նաև Հայաստանում Ֆրանսիայի դեսպան ժոնաթան Լաբրոտը: Նա ողջունեց ուսանողների կազմակերպած միջոցառումը՝ հավելելով.

«Ֆրանսերեն խոսելը հեշտ չէ, ոչ էլ թարգմանելն է հեշտ, բայց եթե երգում եք Ավանվուր, ուրեմն արդեն ֆրանսերեն հասկանում եք»: Այնուհետև կատակով ավելացրեց. «Ես այս տարի չեմ երգի, բայց խոստանում եմ՝ մյուս տարի կփորձեմ»:

14 մասնակիցներից 3-ն արժանացան թաղական մրցանակների: Հաղթողներին ընտրեց հանձնախումբը, որի կազմում էին՝ հաղորդավարուհի-դերասանուհի Նազենի Հովհաննիսյանը, պրոդյուսեր Զառա Պետրոսյանը, Կարեն Անանյանն ու Նատալի Ցագրիսը:

«Այս արագության դարում շատ անսպասելի ու բացառիկ միջավայր է Ավանվուրական համալսարանում: Ես շնորհակալություն եմ հայտնում այն ուսանողներին, որոնք այսօր ամենաթանկը՝ իրենց ժամանակը, տրամադրեցին: Դուք, իսկապես, շքեղ էիք, ներկայանալի, յուրաքանչյուրը իր տեսակի մեջ լավագույնը, բացառիկ ու անկրկնելի», - նշեց Նազենին՝ հույս հայտնելով, որ յուրաքանչյուրի մրցանակը կնպաստի զարգացման և ինքնակրթության:

«Այս երիտասարդական ավուրը մեր երկրի կարևորագույն առողջացումն է: Շնորհակալ եմք ձեզ այսպիսի առողջ միջավայրի համար», - հավելեց հաղորդավարուհին:

Այսպիսով, հանձնախմբի որոշմամբ՝ 3-րդ պատվավոր մրցանակին արժանացան Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ուսանող Սուրեն Պողոսյանն ու Երևանի ճարտարագիտական համալսարանից Հեղինե Հայրապետյանը, 2-րդ մրցանակին՝ Հայ-Ռուսական համալսարանի ուսանող



Հանձնախումբ՝ Նազենի Հովհաննիսյան, Գեորգի Սարաջյան, Նատալի Ցագրիս, Կարեն Անանյան

դուլի Էռնա Թամազյանն ու ԵՊԿ ուսանող Արսեն Զաբարյանը, 1-ին մրցանակը նվաճեց Հայ-Ռուսական համալսարանի ուսանողուհի Մարիաննա Մովսիսյանը:

Գրան-պրիին արժանացավ ԵՊՀ Մշակույթի կենտրոնի երգչախումբը, գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Սարգսյան:

ԽՍՐԱԳՐՈՒԿԱՆ
<https://style.news.am/arm/news/58475/hay-rusakan-hamalsarani-fransiakan-ergi-amenamya-mijazgayin-paratony-nvrvats%2%A0-sharl-aznavuri-hishatakin-foto-video.html>

Սերինե-Լյուբա Թադևոսյանի նվիրյալ աշխատանքի հազոզված արդյունքները

2014 թ. ավարտել է Մոսկվայի Չայկովսկու անվ. պետական կոնսերվատորիայի երգեցողության բաժինը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Իրինա Մասլենիկովայի դասարանը, 2015-ից վերապատրաստվել է ՌԴ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Մակվալա Կասրաշվիլիի մոտ:

Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն, ՌԴ վաստակավոր արտիստ Կոնստանտին Օրբելյանի հրավերով մոսկվաբնակ Ա. Թադևոսյանն աշխատել է Հայաստանում ժյուլ Մասնեի «Մանոն» օպերայի բեմադրությունում, որպես ֆրանսերեն լեզվի հրավիրված մասնագետ: Օպերայի պրեմիերան կայացավ Ֆրանկոֆոնիայի զագաթնաժողովի շրջանակներում, 200 հոգանոց պատվիրակության ներկայությամբ, ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ լիազոր Դեսպանի ժոնապան Լաքրոտի գլխավորությամբ: «Շատ եմ կարևորում իմ առաքելությունը Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոնում «Մանոն» օպերայի բեմադրության գործում. մասնատրո Կ. Օրբելյանի շնորհիվ հանդես եկա միջազգային մի շարք լավագույն փորձագետների թիմում, որի կազմում էին հռչակավոր օպերային բեմադրիչ: Անդրեյ ժագարով (Լաստվիա), դիրիժոր Քրիստոֆեր Օլյասենկը (ԱՄՆ), մենեջեր-գործողության փորձագետ-ուսուցիչ՝ Աբսել Էվերարտը (Բելգիա), ինչպես նաև բեմադրող նկարիչ, պարուսույց և ռեժիսորի օգնական, զգեստների նկարիչ, լույսերի ձևավորող և այլ մասնագետներ: Այս թիմի շնորհիվ հայկական օպերային արվեստը բարձրացավ միջազգային մակարդակի:

Ես ունեմ երկու մասնագիտություն՝ լեզվաբան և Օպերային երգչուհի: Իմ երկու մասնագիտություններն ինձ օգնում են սովորեցնել երգիչներին արտաբերել ֆրանսերեն և իտալերեն լեզուներով օպերային երգաբաժինները:

Հայաստանում ես այժմ իրականացնում եմ նոր նախագիծը՝ «Բիրթրիտ Արմենիա» (Դեպի Հայք) կազմակերպության հետ, որի նպատակն է սփյուռքի երիտասարդ մասնագետներին ներգրավել Հայաստանում իր աշխարհի մասին ծրագրերին. նրանք իրենց գիտելիքներն են ծառայեցնում տարբեր ոլորտների զարգացմանը, կամավորական սկզբունքներով: Աշխատում եմ երևանի պետական կոնսերվատորիայում երգեցողության բաժնի ուսանողների հետ, որպես ֆրանսերեն լեզվի մասնագետ: Արդյունքում պետք է պատրաստենք Ֆրանսիացի կոմպոզիտորների ստեղծագործություններից կազմված մի շարք հաներգներ, որոնք կկայանան Հայաստանում Ֆրանկոֆոնիայի շրջանակներում և կնպաստեն Հայ-Ֆրանսիական հարաբերությունների զարգացմանը: Շնորհակալություն եմ հայտնում ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր Դեսպան ժոնապան Լաքրոտին, որի հրավերով հնարավորություն ընձեռելեց ամձամբ ներկայացնել իմ նախագիծը՝ կապված



Իրինա Լիզագինա (ՌԴ, բեմադրիչի օգնական), Քրիստոֆեր Օլյասենկ (ԱՄՆ, դիրիժոր), Սերինե-Լյուբա Թադևոսյան, Կոնստանտին Օրբելյան, Անդրեյ ժագարով (Լաստվիա, գլխավոր բեմադրիչ)



Իրինա Լիզագինա (ՌԴ, բեմադրիչի օգնական), Քրիստոֆեր Օլյասենկ (ԱՄՆ, դիրիժոր), Սերինե-Լյուբա Թադևոսյան, Կոնստանտին Օրբելյան, Անդրեյ ժագարով (Լաստվիա, գլխավոր բեմադրիչ)

ԵՊԿ ուսանողների հետ, և տեղեկացնել նախատեսվող համերգների մասին, քննարկել դրանք: Նա մեծ հետաքրքրություն ցուցաբերեց և ողջունեց իմ գործունեությունը»:

- Աշխատելով Հայաստանի օպերային մենեջերների հետ ի՞նչ կարևոր հատկանիշներ կընչեք, որոնցով նրանք առանձնանում են:

- Հայաստանի օպերային երգիչներն ունեն հիանալի, տաք և մաքուր ձայներ, կարողանում են փոխանցել երաժշտության և էմոցիաների բոլոր երանգները: Այդ առանձնահատկությունները մեր գեներում են, երբեք չես չփոքի հայ արտիստին: Դրա հետ մեկտեղ կա մի կարևոր ունակություն



Լս՝ սովորելու այն ամենն ինչն անհրաժեշտ է միջազգային օպերայի մակարդակին համապատասխանելու համար. Եվրոպական ոճ, լեզուներ, դերասանական ճկունություն բեմում կերպար ստեղծելու համար: Որպես ֆրանսերենի ֆունդամենտալ մասնագետ աշխատում եմ երգիչների հետ Ֆրանսերեն օպերաների վրա. երևանում պատրաստել ենք «Մանոն» օպերայի պրեմիերան, որը կայացավ Ֆրանկոֆոնիայի շրջանակներում: «Մանոն»ը համարվում է աշխարհի ամենաբարդ օպերաներից մեկը, ռեժիսատիվների մեծ քանակի պատճառով և վոկալային առումով: Միանշանակ կասեմ, որ մեր երգիչների հետ հիանալի արդյունքներ ստացանք. բառերի արտաբերումը շատ «ավտենտիկ» և բնական էր ինչու, համապատասխանում էր իսկական ֆրանսիական ոճին: Ես պատրաստել եմ 4-5 կազմ, աշխատել եմ թատրոնի բոլոր մենակատարների և հրավիրված երգիչների հետ: Աշխատելով մի շարք միջազգային հիանալի ծրագրերի շրջանակներում և Մոսկվայի թատրոններում, Հայաստանի այս ծրագիրը համարում եմ շատ կարևոր իմ մասնագիտական գործունեության մեջ. Այստեղ իմ առաքելությունն է կատարում Հայրենիքիս երաժշտական արվեստի զարգացման գործում:

- Իսկ ի՞նչ կասեք երևանի պետական կոնսերվատորիայի ուսանողների մասին.

- Դեռ մի շարք է, ինչ աշխատում եմ ԵՊԿ ուսանողների հետ, բայց միանշանակ կարող եմ ասել, որ մեծ աշխատասիրությամբ են օժտված իրենց մեջ և ամենակարևորը՝ ունեն սեր դեպի օպերային արվեստը: Դա միանգամից զգացել եմ նրանց լուրջ վերաբերմունքից և կենտրոնացած աշխատանքից: Մեր դասապրոցներ շատ արագ է ընթանում. Արդեն երկու դասից հետո ակտիվորեն կարողանում են օգտագործել ֆրանսերեն լեզվի ճիշտ արտաբերումը երգեցողությամբ: Մենք արդեն պատրաստ ենք անցնել մյուս քայլին՝ երգեցողության դասերի ժամանակ դասախոսի և դաշնակահարի հետ թիմային աշխատանքի շնորհիվ հղկենք կատարելագործում ենք ֆրանսիական նյութերի ճշգրիտ և որակյալ մատուցումը: Անհամբեր սպասում եմ երգեցողության բաժնի մյուս ուսանողների հետ հանդիպմանը և պատրաստ եմ առաջիկայում, սիրով կազմակերպել մի շարք հաներգներ, որոնց միջոցով կներկայացնենք մեր աշխատանքի արդյունքները:

ԱՐՄԻՆԵ ԱՌՈՅԱՆ
Երաժշտագետ,
«Երաժիշտ» ամսագրի
գլխավոր խմբագիր



Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի «Երիտասարդական օպերային ծրագիր» մասնակիցներ, զեղարվեստական ղեկավար Լևոն Ջավադյանի գլխավորությամբ

PLAYGROUND SHELTER IN BORDER VILLAGE KOTI
Pahapan Development Foundation
On October 26, BRIDGE for CSOs hosted a concert organized by the opera coach Serine Lyuba Tatevosyan in support of Pahapan Development Foundation. Tatevosyan, who is originally from Moscow, has been working in Armenia on staging Jules Massenet's "Manon" opera which will premiere during the Francophonie Summit in Autumn. In the framework of BRIDGE for CSOs program, she organized a French music night and raised money for building playground shelter at the school of bordering Koti village. The shelter will be equipped with school supplies and toys to make it less traumatic for children who may need to hide there in case of bomb attack.

Serine Lyuba Tatevosyan
Opera singer, vocal coach
BRIDGE for CSOs Goodwill Ambassador
"I have two professions: linguistics and vocal coaching. I train singers to perform properly in Italian and French. In Armenia, we are currently working on a very difficult opera "Manon". French opera tradition has some strict rules for performers, moreover, President Emmanuel Macron is expected to attend the premiere, so we have a pretty challenging task! During my stay in Armenia, I learnt about AGLU's BRIDGE for CSOs project. I wished to contribute and wanted very much for my efforts to be helpful for children. I was very excited when I discovered Pahapan Development Foundation and the Playground Shelters project. So, we organized a concert where singers from the Young Artists Opera Program, kids from Mkhitar Sebastatsi Educational Complex, as well as "Astghikner" vocal studio choir performed different French arias. I coached the kids for several weeks. With young singers we worked on phonetics. The kids were very artistic and receptive; they couldn't even write in Armenian yet but performed amazingly in French! They opened the concert, then "Astghikner" performed, and then the Young Artists came in. I myself also sang, and all the proceeds from the concert we transferred for the benefit of Pahapan's project of building the playground shelter. The construction works are now in process. This whole experience taught me that one does not have to have an extremely big network or a lot of money to help someone; you can do good even with very small means and support from the right initiatives – just like BRIDGE for CSOs!"



Սերինե-Լյուբա Թադևոսյան, Քրիստինե Սիմոնյան (կոնցերտմաստեր), Անահիտ Սերոբյան (ԵՊԿ երգեցողության բաժնի 3-րդ կուրս)



ԵՐԱՇԻՏԻ ԿՈՄԻՏԱՅԻ ԱՆՎԱՆ ԳԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱԿԻ ԱՄՍԱԹԵՐՔ

Լոյս է տեսնում 2009թ. դեկտեմբերից # 03 (149) մայիս 2019 զինքը 100 դրամ

ISSN 2579-2607



Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Ամսաթերք

Լոյս է տեսնում 2009թ. դեկտեմբերից 2009թ. դեկտեմբերից 20-ից (149) # 3 (3) մայիս 2019

Փոխվել է «ԵՐԱՇԻՏ» ամսաթերթի անվանման փառաբանակը,

2019 թվականի հունվարից Ghabuzian Art փառաբանակով է արդրված:

Ենթադրվում է Ենթադրվում է Գաբուզյանի կողմից անհատույց:

«ԵՐԱՇԻՏ» ամսաթերթն 2019 թվականի հունվարից լույս է տեսնում էլեկտրոնային տարբերակով ԵՊԿ կայքում:

«ԵՐԱՇԻՏ» ամսաթերթն ու «Երաժշտական ԴԱՅԱՍՏԱՆ» գիտական միջազգային ամսագիրը ԳԳ ազգային գրադարանի շնորհիվ միջազգային էլեկտրոնային կայքում է:

«ԵՐԱՇԻՏ» ամսաթերթը տե՛ս http://www.conservatory.am/tert/N157_hunvar.pdf

Ման Facebook էջում լրացուցիչ, հրատապ և տեսա լսողա հոլովակների նյութերով (f)Yerazhisht-newspaper Yerevan State Conservatory <https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/>

հետադարձ կապը՝ e-mail: yerazhisht@gmail.com «Երաժիշտ» ամսաթերթի մասին տե՛ս www.facebook.com/EPKEE/ Yerevan Komitas State Conservatory

К 100-летию со дня рождения Шаке Закарян

13 апреля 2019 года в зале им. Константина Соломоновича Сараджева Ереванской средней специальной музыкальной школы им.Чайковского состоялся концерт класса художественного аккомпанемента педагога школы, доцента Ереванской государственной консерватории им.Комитаса Саеник Акоповны Магакян, посвященный 100-летию со дня рождения ее первого педагога по аккомпанементу, прекрасного концертмейстера, заслуженного учителя Армении Шаке Арамовны Закарян. На концерте присутствовали уважаемые и именитые композиторы, музыканты–профессора Ереванской консерватории: сын Шаке Закарян – композитор Левон Чаушян, Ерванд Еркянян, Мартын Вартазарян, Сурен Закарян, Эдуард Татевосян, Сергей Сараджян, Асмик Петросян, Шушаник Бабалян, завуч Зара Вартанян и педагоги школы. Со вступительным словом выступил Заслуженный деятель искусств РА, профессор Армен Будагян, который рассказал присутствующим о славном пути великолепного концертмейстера, основательницы класса художественного аккомпанемента в школе им.Чайковского Шаке Арамовны Закарян. Она стала первым педагогом и заведующей циклом (вплоть до 2008 года).

А.Будагян также представил недавно изданную книгу Саеник Магакян “Концертмейстеры Армении”, во второй главе которой один из 34-х очерков о ведущих концертмейстерах Армении посвящен деятельности Шаке Закарян.

Приведем основные вехи жизни и деятельности Шаке Закарян (Саеник Магакян., Концертмейстеры Армении., Ер.:Лусакн., 2019. С.198).

чутким концертмейстером впоследствии известных в Армении и за ее пределами виолончелистов – Ваграма Сараджяна, Левона Мурадьяна и Варужана Бартикяна. Она аккомпанировала виолончелистам, которые заняли достойное место в армянском исполнительском искусстве и педагогике: Левону Григоряну, Тиграну Адамяну, Айку Амадуни, Эдуарду Гулабяну, Юрию Татевосяну, Джону Геворкяну, Ваге Айрикяну, Рафаелу Наняну, Татевосу Асояну, Давиду Давтяну, Нарине Арутюнян, Армине Аветисян, Гаяне Саакян и другим.

В качестве концертмейстера она приняла участие в трех Закавказских конкурсах: Втором (1965, Тбилиси), в котором выступили ученики А.Чаушяна – Ваграм Сараджян (1-я премия) и Ваге Айрикян (диплом), а также ученик Т.Айрапетян – скрипач Эдуард Тадевосян (2-я премия);Третьем (1969, Ереван) – Рафаел Нанян (2-я премия) и Четвертом (1972, Баку) – Давид Давтян (1-я премия) и Нарине Арутюнян (2-я премия). Концертмейстер Ш.Закарян на всех трех конкурсах была удостоена Диплома за лучший аккомпанемент.

В том же 1972 году в Риге проходил Всесоюзный конкурс молодых музыкантов, в котором участвовали ученики А.Чаушяна с концертмейстером Ш.Закарян. Из двоих участников Нарине Арутюнян стала дипломантом.

В 1956 году в Москве в Большом театре СССР Ш.Закарян выступила с ансамблем виолончелистов музыкальных учебных заведений Еревана в заключительном концерте Декады армянского искусства и литературы (был исполнен

– ученики 9–го класса, Лаура Асатрян и Ван Берберян – 10–го класса, Марине Мкртчян – 11–го класса и Шушаник Гукасян, Бабкен Аридзян – 12–го класса. Своими профессиональными навыками, ярким исполнением и сложностью программы выделались Марине Мкртчян (забегая вперед скажем, что 4 мая состоится сольный концерт Марине по художественному аккомпанементу) и Шушан Гукасян. Большую и ответственную роль в удачном выступлении молодых концертмейстеров сыграли солисты: вокалисты Мариам Мнацаканян, Лилит Григорян, Нелли Сагателян (студентка ЕГК им. Комитаса), Лина Матинян и инструменталисты – виолончелист Гарник Енгибарян, скрипачки Ани Хачунц (студентка ЕГК им. Комитаса) и Анна Цаканян.

Из книги С.Магакян: В музыкальной семье Шаке Закарян и ее супруга, Заслуженного деятеля искусств, Заслуженного учителя Армении профессора Александра Чаушяна продолжил профессию родителей их единственный сын Левон Чаушян – пианист, видный композитор, секретарь правления Союза композиторов Армении, Заслуженный деятель искусств Армении, профессор, основавший и возглавивший



Ван Берберян, Нелли Сагателян, Лаура Асатрян, Марине Мкртчян, Саеник Акоповна Магакян, Шушаник Гукасян, Ани Хачунц, Эдуард Акопян



Ани Хачунц (скрипка), Шушаник Гукасян



Гарник Енгибарян (виолончель), Марине Мкртчян

Шаке Закарян родилась 5 марта 1919 года в Алеппо (Сирия), куда из Эрзерума в период Геноцида 1915 года дошли семьи армян. Позже семья обосновалась в Тбилиси.

Шаке с детства проявила музыкальные способности и поступила в Тбилиское музучилище в класс фортепиано известного педагога Насибовой. Постоянно и успешно участвуя в концертах училища, Шаке решила продолжить музыкальное образование и поступила в Тбилискую консерваторию в класс профессора Ильи Семеновича Айсберга. Она с отличием окончила консерваторию (председателем госэкзаменационной комиссии был известный профессор Московской консерватории Александр Борисович Гольденвейзер).

В студенческие годы Шаке Закарян познакомилась со своим будущим супругом, виолончелистом Александром Чаушяном и в 1944 году переехала с мужем в Ереван. Шаке Закарян поступила концертмейстером в музыкальную школу–десятилетку им.Чайковского и, одновременно, в музыкальную семилетку им. А.Спендиаряна в скрипичный класс Вероники Ахшарумовой. Она работала концертмейстером также в классах виолончели Левона Григоряна, Александра Чаушяна, с 1969 года – в классе Заре Саркисяна и скрипичном классе Татьяны Айрапетян.

С группами учеников Шаке Закарян участвовала в качестве концертмейстера в творческих встречах–концертах ССМШ им.Чайковского и музыкальных школ–десятилеток разных городов СССР.

Концертмейстер Закарян была первым, надежным и

“Экспромт” А. Арутюняна). В 1950–х годах Шаке Закарян была направлена в Москву в ЦМШ на стажировку. Вернувшись в Ереван, Шаке Закарян предложила директору школы им.Чайковского, композитору Сергееву Кесаяну открыть класс художественного аккомпанемента. Таким образом, в конце 1950–х годов в ССМШ им.Чайковского было положено начало новой музыкальной дисциплине для учащихся–пианистов. В 1972 году Шаке Закарян была удостоена звания Заслуженного учителя Армении.

На концерте учащиеся класса художественного аккомпанемента С.Магакян показали отличную профессиональную подготовку и несмотря на волнение (ведь в зале присутствовали представители музыкальной элиты Армении) смогли донести до слушателей содержание исполняемой музыки, стиль композиторов. Прозвучали как вокальные сочинения – песни и романсы русских композиторов (М.Мусоргского “На сон грядущий”, И.Дунаевского “Песенка о капитане”, С.Рахманинова “Полюбила я на печаль свою” и “Сирень”, А.Даргомыжского “Мне минуло 16 лет”, П.Чайковского “Весна”), армянских композиторов (Э.Мирзояна “Չերիռուշ”, “Երազ տեսա”, Э.Абрамяна “Ես հիշումեմ աջբերը քո”, Л.Чаушяна “Գետակի վրա”), так и инструментальные пьесы (“Полонез” Г.Венявского, “Ноктюрны” А.Хачатуряна и Э.Багдасаряна, “Арташатский танец” Г.Адамяна, “Экспромт” А.Арутюняна). Все выступающие – ученики старших классов (пианисты этим важным для них предметом начинают заниматься с 9–го класса): Эдуард Акопян и Элен Татевосян

в 1994 году новую общественную организацию – Армянскую Музыкальную Ассамблею. Дети Левона Чаушяна: Анаит – пианистка, лауреат Международного конкурса им. Дюрле в Брюсселе и Александр Чаушян–младший – лауреат шести престижных международных конкурсов, гастролирующий по всему миру известный виолончелист (Анаит и Александр ныне проживают в Англии). В 13 лет А.Чаушян–младший на конкурсе в Вероне завоевал единст-

венный приз (аккомпанировал ему отец Левон Чаушян) – премию им.Моцарта, которая дала ему возможность учиться там, где он пожелает. Через год Чаушян–младший получил приглашение на конкурс по отбору учеников для получения образования в школе И.Менухина (отец поехал с сыном в качестве концертмейстера) и был принят на единственное бесплатное место. Далее – учеба в двух высших музыкальных академиях, Королевская премия на специальном конкурсе... В настоящее время А.Л.Чаушян – профессор Королевского колледжа, солист, ансамблист. С 2006 года он соучредитель, художественный руководитель и участник (с худруком и главным дирижером Национального филармонического оркестра Армении Эдуардом Топчяном) ежегодного Ереванского международного музыкального фестиваля (в 2016 году состоялся 10–й юбилейный фестиваль).

Думается, что такие концерты–посвящения необходимы, чтобы не забывались имена преданных своему делу профессионалов, которые когда–то были рядом с нами, каждый из которых своей деятельностью привнес свое понимание и вклад в развитие армянского искусства, традиции которого и сегодня достойно продолжают их последователи. Этот добрый концерт – дань памяти и уважения – еще раз напомнил, а молодых познакомил с именем Шаке Арамовны Закарян.

СОФА АЗНАУРЯН
композитор, редактор журнала “Музыкальная Армения”

Մարտի 23-ին կոնսերվատորիայի աշխատակազմը և ուսանողները մասնակցեցին համահայկական շաբաթօրյակին:



Շաբաթօրյակի ընթացքում Armenia Tree Project-ն աջակցեց տարածքի կանաչապատմանն ու բարեկարգմանը:

Մարտի 26-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան հյուրընկալեց Իտալիայի «Siena Jazz



«Siena Jazz Academy»ի ներկայացուցիչները ԵՊԿ-ում

Academy»ի ներկայացուցիչներին, ովքեր եկել էին Erasmus + ծրագրի շրջանակներում: Հանդիպման ընթացքում քննարկվեց դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագիրը: Հանդիպումից հետո կազմակերպվեց ջազ համերգ՝ կոնսերվատորիայի ուսանողների մասնակցությամբ:

Լուսանկարները՝ Մարիամ Ղազանջյանի

Մարտի 26-ին ԵՊԿ Գյումրու մասնաճյուղում տեղի ունեցավ ԵՊԿ կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի «Երաժշտական գիտամակավարժական գործունեության հիմունքներ» դասընթացի հաշվետու գիտաժողովը: Ողջույնի խոսքով հանդես եկավ ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանը՝ հավաստիացնելով, որ մայր բուհի և մասնաճյուղի համաքայլ զարգացումը հետադարձ կապահովվի նաև մասնատեղի հանդիպումների ու ձևաչափի շնորհիվ: ԵՊԿ կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լիլիթ Եփրեմյանը իր ներածական խոսքում նշեց, որ օրեր առաջ մույսնատիպ գիտաժողով-բաց դաս անցկացվել է նաև Երևանում, ինչից հետո որոշվել է հանդիպումն անցկացնել նաև Գյումրիում: Ելույթներով հանդես եկան ԵՊԿ ստեղծագործություն բաժնի մագիստրոսական կրթության 2-րդ կուրսի ուսանողներ՝ Դավիթ Գյոզալյանը՝ փոփ երաժշտության ոլորտի կրթական խնդիրներին առնչվող զեկույցով, Բարդի Մինասյանը՝ Եղվարդ Միրզոյանի «Տխուրվալիս» կիթառի համար հեղինակային փոխադրումով ու տեսահոլովակի ներկայացմամբ, դաշնամուրային բաժնի մագիստրոսական կրթության 2-րդ կուրսի ուսանող Վահագն Վարդանյանը՝ Վիլի Սարգսյանի դաշնամուրային փոխադրումների իր ան մեկնաբանությամբ ու կատարումներով, փողային բաժնի մագիստրոսական կրթության 2-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Ներսիսյանը՝ ՀՀ կրթության ոլորտի խնդիրների իր իսկ դիտարկումներով և ազգային նվագարաններ բաժնի մագիստրոսական կրթության 2-րդ կուրսի ուսանող Հելենա Ասատրյանը, ով ներկայացրեց իր հեղինակած Շվիի դասագիրքը, որը վերջերս է լույս տեսել ՀՀ ԿԳ նախարարության աջակցությամբ:

Հանդիպման ավարտին ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր Հանդիպման ավարտին ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր



Հ. Հարությունյան, Լ. Եփրեմյան, Վ. Վարդանյան, Ծ. Մովսիսյան, Լ. Ներսիսյան, Բ. Մինասյան, Դ. Գյոզալյան, Հ. Ասատրյան

տոր Ծովինար Մովսիսյանը նշեց, որ մայր բուհից դատարկածեռն չեն եկել...մասնաճյուղի գրադարանին նվիրեցին Վալենտին Թովմասյանի անձնական գրադարանի մեծ մասն ու այլ կարևոր մասնագիտական գրականություն: ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Հասմիկ Հարությունյանը բարձր գնահատեց այս հանդիպումը՝ կարևորելով ԵՊԿ ռեկտորատի և հատկապես ռեկտորի պաշտոնակատար Սոնա Հովհաննիսյանի կողմից ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի հետ համագործակցությունը, որը խթան կհանդիսանա հատկապես գիտամեթոդական աշխատանքների զարգացման ոլորտում: Նա գիտաժողովի մասնակիցներին պարգևատրեց շնորհակալագրերով:

Մարտի 28-ին Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում կայացավ սեմինար՝ կոմպոզիտոր Ար-



թուր Աբշելյանի ղեկավարությամբ: ԵՊԿ կայքի լուսանկարները՝ Մարիամ Ղազանջյանի

Ապրիլի 2-ին Երազմուս+ ազգային գրասենյակը հյուրընկալեց Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի միջազգային կապերի բաժնի ղեկավար Արկադի Ավանեսովին և Իտալիայի Սինեա Ջազ Ակադեմիայի Երազմուս+ ծրագրի համակարգողներ՝ Յակոպո Գուլիոնի և Մարիամ Վերմիլիոյին: Սինեա Ջազը համաշխարհային ճանաչում ունի ջազային կրթություն առաջարկող մասնագիտակցված երաժշտական հաստատությունների շարքում է: Կոնսերվատորիայի հետ Սինեա Ջազ Ակադեմիայի հա-



Երազմուս+ ազգային գրասենյակը հյուրընկալեց Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի միջազգային կապերի բաժնի ղեկավար Արկադի Ավանեսովին և Իտալիայի Սինեա Ջազ Ակադեմիայի Երազմուս+ ծրագրի համակարգողներ՝ Յակոպո Գուլիոնի և Մարիամ Վերմիլիոյին

մագործակցությունը նոր է մեկնարկել, ուստի այս հանդիպման նպատակներից էր քննարկել երկու հաստատությունների միջև Երազմուս+ դրամաշնորհներով դասախոսների և ուսանողների շարժունության կազմակերպման մանրամասները, արվեստի ոլորտում բարձրագույն կրթության կարո-

ղությունների զարգացմանը միտված ծրագրերի մշակման հեռանկարները:

Յակոպո Գուլիոնի շեշտադրեց հայկական երաժշտական գործիքների և ժողովրդական երաժշտության հանդեպ Ակադեմիայի մեծ հետաքրքրությունը և փորձի փոխանակման ցանկությունը:

ԵՊԿ-ի Կ. Սարաջևի անվան գրադարանի պատվավոր նվիրատու Հովհաննես Համբարձումյանը գրքերի իր հերթական նվիրատվությունն է արել:



ԵՊԿ ամբողջ աշխատակազմը բարձր է գնահատում մեր հայրենակցի անշահախնդիր ու գործուն աջակցությունը՝ Հայաստանի երաժշտական մայր ԲՈՒՀ-ի գրադարանային ֆոնդի համալրման գործում:

Նյութը պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՅԾՅԱՆԸ

ԵՐԱՃԻՇՏԸ՝ ԱՐՄՏՐԱՅՐԱՎԱԾ ԳՈՒՆԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿ

Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում Մարգարիտ Սարգսյանի գեղանկարների ցուցադրությունն ուղեկցվեց իր իսկ հեղինակած ռոմանսների կատարմամբ:

Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի կոնցերտմայստերական պատրաստման ամբիոնի պրոֆեսոր Մարգարիտ Սարգսյանի հոբելյանական համերգը, որ օրերս է կայացել, մի տեսակ ամբողջացավ մարտի 7-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում բացված ցուցահանդեսով, որում այս անգամ ներկայացված էին դաշնակահար-երգահանի գեղանկարչական գործերը: Դրանք, իր իսկ բնորոշմամբ, գունավոր արտահայտումներ են, անվերնագիր, որպեսզի դիտողի երևակայությունը չսահմանափակեն յուրաքանչյուրին հնարավորություն տալով մեկնության իր տեսանկյունը գտնելու, նկարներից իր զգացողություններն ազատորեն վերաշարադրելու համար: Նկարել սկսել է բավական հասուն տարիքում, իրեն խորհուրդներով մի շրջան ուղղորդել է Հենրիկ Իգիթյանը: Մարգարիտ Սարգսյանի նկարները մի քանի անգամ ցուցադրվել են տարբեր սրահներում, և ահա, խաչատրյանական ոգով լեցուն համերգային սրահի պատերին Մարգարիտի նկարներն էին, որոնց ցուցադրությունն ուղեկցվեց ռոմանսների կատարմամբ, որոնք դարձյալ ի նքն է հեղինակել: Հնչեցին Հասմիկ Սարգսյանի և դաշնակահարուհի և Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանի խոսքերով գրված 5 ռոմանսներից բաղկացած շարից երկուսը՝ Դիանա Հարությունյանի, Նարինե Անանիկյանի, Աննա Պողոսյանի և Անդրանիկ Մալխասյանի կատարմամբ: Մշակութային այս միջոցառումը մեծ ձևաչափով անցկացնելու զաղափարը երաժշտագետ Գոհար Շագոյանին



Անդրանիկ Մալխասյան, Արմինե Գրիգորյան, Մարգարիտ Սարգսյան, Դիանա Հարությունյան, Նարինե Անանիկյան, Աննա Պողոսյան, Գոհար Շագոյան

եր, որը «ԵՊԿ հրատարակչության» ղեկավարն է և նաև այդ շրջանակում էլ նախածնունդ է «Վենետուկ», որի խթանը հանդիսացավ Հ. Թումանյանի ծննդյան օրը փետրվարի 19-ը: Եվ յուրաքանչյուր հիզաբթի հրավիրյալ երաժիշտների, արվեստագետների, ուսանողների մասնակցությամբ տեղի են ունենում ստեղծագործական թամատիկ հանդիպումներ: Սույն միջոցառումը կազմակերպվել էր համատեղ Ա. Խաչատրյանի տուն թանգարանի հետ:

ՀԱՄՏԻԿ ՍԱՐԳՅԱՆ Ապրիլի 7-ը, 2019 թ.

♦ Ապրիլի 10-ին Կոնսերվատորիայի հյուրընկերությունում երգչուհի «Mirak-Weissbach» հիմնադրամի ղեկավար Մյուրիել Միրաք-Վայսբախը, ով Հայոց Մեծ եղեռնից փրկված երկու ծնողների ժառանգ է: Տիկին Մյուրիելը և իր ամուսինը ներկայացրեցին 2012-ից գործող հիմնադրամի բարեգործական ծրագրերը, որոնց նպատակն է երաժշտական գործիքների նվիրատվությամբ շնորհալի երիտասարդներին կրթության աջակցությամբ ապահովել Հայաստանում դասական երաժշտության մշակույթի կենսունակությունը:

Դեռևս 2016 թ. հիմնադրամը կոնսերվատորիային էր նվիրաբերել դաշնակահար և դիրիժոր Բերնարդ Շեյդտի անձնական գրադարանը: Բ. Շեյդտը մեծ ներդրում ունեցող մանկավարժ էր և իր սաներին դաստիարակել է գերմանական ու եվրոպական արվեստի բարձր ավանդույթներով:



Մյուրիել Միրաք-Վայսբախը ամուսնու հետ, Արկադի Ավանեսով

Նա անձամբ ճանաչել է Մարիա Կալասին, Վիլիելմ Ֆուրտվենգերին, Պաբլո Կազալսին, Վիլիելմ Կեմպֆին: Կարելի է ասել, որ Բ. Շեյդտի գրադարանի ներկայությամբ վաստակաշատ մանկավարժի ավանդույթը փոխանցվել է նաև հայ ուսանողներին: Այդ գրադարանը արդեն համակարգվել է, մուտքագրվել է և ԵՊԿ գրադարանի ֆոնդի մասն է կազմում: Տիկին Մյուրիել Միրաք-Վայսբախը իր երախտագիտությունը հայտնեց ԵՊԿ գրադարանի վարիչ Վարվառա Գրիգորյանի ղեկավարությամբ կատարված պրոֆեսիոնալ աշխատանքի համար:

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՍԻ ԱՆՎԱՆ ԱՊՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԷՐԱԶՄՈՒՄ + ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒՄԻ ՀԵՏ



Արմեն Բաբախանյան, Արամ Հովհաննիսյան, Էռիկ Լահեսման

Ապրիլի 9-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում տեղի ունեցավ հանդիպում երազմուս+ ծրագրի մասնակցած ԵՊԿ լարային անբիոնի դասախոս, դոցենտ Արամ Թալալյանի (թավջութակ), դաշնամուրային ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Մարտին Շահբազյանի և ծրագրի շրջանակներում ԵՊԿ-ում երկշաբաթյա վարպետության դասեր տալու համար Հայաստանում գտնվող Ֆինլանդիայի Տուրկու կիրառական գիտությունների համալսարանի արվեստի ակադեմիայի ավագ դասախոս, թավջութակահար Էռիկ Լահեսմանի հետ: Հանդիպումը հնարավորություն ընձեռնեց ներկայումս մանրամասն ծանոթանալու երազմուս+ ծրագրին և լսելու ծրագրի մասնակիցների տպավորությունները իրենց փորձի մասին:

«1987 թվականից ի վեր երազմուս ծրագրի շրջանակներում իրականացված կրթական և մշակութային փոխանակման ծրագրերը մեծապես նպաստել են երաժշտական մշակույթի զարգացմանը», – իր բացման խոսքում ասաց ԵՊԿ ուսումնական գծով պրոռեկտոր Արամ Հովհաննիսյանը, բա-

ցատելով, որ երազմուսի պես ծրագրերը թույլ են տալիս երաժիշտներին կիսվել իրենց փորձով և կապեր հաստատել տարբեր մշակույթների ներկայացուցիչների հետ:

Պարոն Հովհաննիսյանի խոսքին հետևեց Հայաստանում երազմուս+ ծրագրի համակարգող Լանա Կառլովայի ելույթը, որի ընթացքում նա ներկայացրեց ծրագրի երեք հիմնական գործողությունները (ՀԳ), որոնք են՝ անհատների ուսումնական շարժումության (ՀԳ1), նորարարությանը միտված համագործակցության և լավագույն փորձի փոխանակման (ՀԳ2) և քաղաքական բարեփոխումների աջակցության գործողությունները, ինչպես նաև Արևելյան գործընկերության երկիր Հայաստանում իրականացված ծրագրերն ու դրանց արդյունքները:

Պրոֆեսոր Լահեսման, ով երկրորդ անգամն է գտնվում Հայաստանում երազմուս+ ծրագրի շրջանակներում, ասաց, որ փոխանակման ծրագրերի մասնակցության իր ավելին քան 20 տարվա փորձը մեծապես նպաստել է իր մասնագիտական զարգացմանը որպես երաժիշտ և մանկավարժ, ինչպես նաև հնարավորություն է տվել ծանոթանալ տարբեր մշակույթների հետ: «Հիացած եմ Երևանի պետական կոնսերվատորիայի ուսանողների վարպետության բարձր մակարդակով և սովորելու պատրաստակամությամբ: Շատ տպավորված եմ նաև կոնսերվատորիայի դասախոսական կազմի նվիրվածությամբ իրենց մասնագիտությանը», – հավելեց Լահեսմանը:

Հանդիպման ավարտին երազմուս+ ծրագրի մասնակցության իր փորձի մասին խոսեց Մարտին Շահբազյանը, ով հանդիսանալով ԵՊԿ 1-ին ուսանող Տուրկու Կիրառական գիտությունների համալսարանում, շեշտեց երազմուս+ ծրագրերի կարևոր դերը երաժշտի ինքնագրագրման, տարբեր մշակույթների փոխգործակցության, ինչպես նաև արտասահմանում Հայաստանն ու հայկական երաժշտական հարուստ մշակույթը ճանաչելի դարձնելու գործում:

Հանդիպմանը մասնակցում էր նաև ԵՊԿ դաշնամուրային ֆակուլտետի դասախոս, պրոֆ. Արմեն Բաբախանյանը,

ով շուտով հանդես կգա վարպետության դասերով Տուրկու կիրառական գիտությունների համալսարանում երազմուս+ ծրագրի շրջանակներում:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան (ԵՊԿ) հիմնադրվել է 1921թ. որպես երաժշտական ստուդիա, իսկ երկու տարի անց դարձել է Հայաստանում առաջին բարձրագույն երաժշտական կրթական հաստատությունը: Տեղակայված մայրաքաղաքի կենտրոնում՝ Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի և ֆիլհարմոնիայի մեծ համերգասրահի հարևանությամբ՝ ԵՊԿ պրոֆեսոր-դասախոսական կազմը համարված է Հայաստանի լավագույն երաժիշտներով՝ կոմպոզիտորներով, երաժշտագետներով, կատարողներով, որոնք աջակցում են ԵՊԿ-ի ավելին քան 1000 ուսանողներին պահպանել և հավերժացնել ինչպես հայկական, այնպես էլ միջազգային երաժշտության հարուստ ժառանգությունը: ԵՊԿ-ին և իր գործունեությանն ավելի մանրամասն ծանոթանալու համար այցելեք www.conservatory.am:

Հայաստանում երազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի գործունեության նպատակն է աջակցել երազմուս+ ծրագրի խթանմանն ու տարածմանը Հայաստանում: Երազմուս+ը հնարավորություն է տալիս ուսանողներին և հայաստանյան բուհերի աշխատակիցներին ուսանելու և (կամ) մասնագիտական փորձ ձեռք բերելու արտերկրում կրթաթոշակի կամ դրամաշնորհի միջոցով, տրամադրում է ամբողջական կրթաթոշակ միջազգային համատեղ մագիստրոսական ծրագրերում ներգրավվելու համար, խթանում է կրթական համակարգերի և բուհերի միջև համագործակցությունը և տեսանելի դարձնում վերջիններիս արդիականությունն ու միջազգայնացումը: Երազմուս+ ծրագրի մանրամասներին կարող եք ծանոթանալ այստեղ՝ www.erasmusplus.am:

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ
www.conservatory.am

ԱՐՎԵՍՏԻ ԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԲԱՆԱԶԵՒԻ ԵՐԵՎԱՆԻ ԱՊՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՆԿՈՒՂՈՒՄ

Այն մարդը, որն ազատությունից կախահանջի ավելին, քան բուն ազատությունն է, ծնվել է՝ արյուն լինելու: ԱԼԵՔՍԻ ԴԵ ՏՈՎԿԻԼ

Ապրիլի 6-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի նկուղ «Ad libitum» ազատ արվեստակիր ուսանողների նախաձեռնության և Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի համագործակցության արդյունքում ցուցասրահի էր վերածվել: «Ազատությունը արվեստի միջոցով» խորագիրը կրող ցուցահանդեսում ցուցադրված էին Հայաստանի 10 բուհերի ուսանողների աշխատանքներ: Ցուցահանդեսի մեկնարկը տրվեց Ա. Վիվալդիի հնչյունների ներքո: «Ad libitum» նախաձեռնության ներկայացուցիչ Հայկ Մակյանի խոսքով՝ նկուղում ցուցահանդես կազմակերպելն արվեստի հզոր ներգործության ուժը ցուցադրելու յուրատեսակ միջոց էր: Նա ցուցահանդեսը

սը «ստեղծագործ ակտիվիզմ» անվանեց. «Այս նախաձեռնությունը կարևոր էր բուհերի միջև ազատ համագործակցության ստեղծման առումով: Հայտնի է, որ միջբուհական համագործակցությունները հիմնականում կազմակերպվում են նախարարության կողմից, կամ իրագործվում են որոշակի հուշագրեր ստորագրելուց հետո: Տվյալ ցուցահանդեսը ուսանողի ինքնակազմակերպման արդյունքն է: Հենց ինքնակազմակերպման ոգին ենք անվանում ազատություն», – ասաց Հայկը: «Հանուն ազատության» հիմնադրամի ներկայացուցիչ Եվա Թովմասյանի խոսքով՝ միջոցառումներ կազմակերպելիս պետք է կարևորել դրամցում մարզաբնակ ուսանողների ներգրավվածության հարցը: «Հաճախ եմ նկատում, որ նմանատիպ միջոցառումներին մասնակցելու հնարավորություն առավել հաճախ ստանում են երևանաբնակ ուսանողները: Մարզաբնակներին ներգրավելու հնարավորությունը տվյալ ցուցադրության գլխավոր առանձնա-

հատկություններից մեկն են համարում», – ասաց նա: Ցուցահանդեսին ներկա էին կոնսերվատորիայի ռեկտոր Սոնա Հովհաննիսյանը, ԿԳՆ փոխնախարար Արևիկ Անափոսյանը, արվեստագետներ Արման Գրիգորյանն ու Հովհաննես Մարգարյանը: Արման Գրիգորյանը նկատեց, որ ցուցասրահում պատկերված նկարները հիմնականում դասական արվեստի ուսումնասիրության արդյունք էին: Նա ժամանակակից տեխնոլոգիաների (ֆոտո, վիդեո, լուսանկար) օգտագործման բացակայությունը գովելի համարեց: Նրա այս դիտարկմանը հակադարձեց արվեստագետ Հովհաննես Մարգարյանը, որն ուսանողներին հորդորեց ձեռքի արվեստից կախված չլինել և օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաների տրամադրած հնարավորությունները: Անդրադառնալով ազատության արվեստին՝ խոսեց գրաֆիտիից, որը, նրա խոսքով, անհատի համարձակության դրսևորման միջոց է և մասնակիցներին խորհուրդ տվեց առավել համարձակ լինել. «Ձեր ոչ թե կառուցելու, այլ կարծրատիպեր բանդելու ժամանակն է», – ասաց Հովհաննես Մարգարյանը: Արևիկ Անափոսյանի խոսքով՝ արվեստը կրթության այլ բնագավառների հետ հավասար պիտի զնահատվի. «Բնուրս կարևորում ենք մաթեմատիկան, լեզուների իմացությունը, բայց եկել է ժամանակը գիտակցելու, որ արվեստը ևս լեզու է և շատ բաներ միայն այդ լեզվի շնորհիվ են մեզ հասկանալի դառնում»: Նաև խոստացավ, որ կրթության և գիտության ոլորտում սպասվող բարեփոխումները կներառեն նաև այս ոլորտը:



Սաթենիկ, Մարիաննա Հայրապետյան, Ջոյա Սարգսյան, Ծովհանր Մովսիսյան, Օլյա Նուրիջանյան, Պատի վրա ցուցադրված են ԵՊԿ երգեցողության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Ջոյա Սարգսյանի կտավներից



Արվեստագետ, արվեստի քննադատ՝ Արման Գրիգորյան



ԵՊԿ մագիստրոսականի 1-ին կուրսի ուսանողուհի, կոմպոզիտոր՝ Գերմինե Հարությունյանի կտավը՝ Մակար Եկմայանի «Հայր Մեր»ը նուստագրված յուղաներկով, Կտավը հեղինակին պատվիրվել էր հատուկ Արտաշատի «Երգչախմբային սենյակ»ի համար

ԷԼԻՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ
Նյութը վերցված է <https://www.aravot.am/2019/04/07/1034445/?fbclid=IwAR2cNWnsupJA4WJokTd6WFvM5tm1jKcXJIBUTRgVPRg6sjsbEJM0EExelBQ> կայքից

Ալիսա Արզումանյանի գիտամանկավարժական գործունեությունը

Շուրջ 35 տարի գիտամանկավարժական գործունեություն ունեցող պրոֆեսոր (2014-ից) է Ալիսա Արզումանյանը: Նա դասավանդում է ԵՊԿ-ում 1987-ից և դոցենտի կոչումն անդրիվել է դեռ 2011-ից: Նրա սաները ոչ միայն Հայաստանում այլև արտերկրում Գերմանիայում, Շվեյցարիայում և այլուր արժանացել են խրախուսանքների:

Նա իր գործունեությունը մշտապես ցուցադրել է համերգային հաշվետվությամբ: Լինի դա Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի, թե՛ Երևանի քաղաքային դահլիճներում և համերգասրահներում ինչպես օրինակ Ա. Խաչատրյանի անվ. մեծ համերգասրահում, Ա. Սպենդիարյանի անվ. ազգային ակադեմիական օպերայի և բալետի Հայելպատ, ՀԿՄ դահլիճներում, Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը, Ա. Խաչատրյանի տուն թանգարանում, Փաֆեժյան, Նարեկացի արվեստի կենտրոններում, ԱՕՔՍ-ում, Ժամանակակից արվեստի և այլ թանգարանների նաև երաժշտական դպրոցների դահլիճներում ինչպես օրինակ Պ. Ի. Հայկովսկու անվ. ՄՄԵԴ-ի մեծ և փոքր համերգասրահներում և այլն:

2011-ին Գրան պրիի են արժանացել նրա ուսանողներից դաշնամուրային Կվինտետ՝ Անահիտ Բարխուդարյանը (դաշնամուր), Լուսինե Աբադյանը (1-ին ջութակ), Վիկտորիա Մինասյանը (2-րդ ջութակ), Սոսե Սեդրակյանը (ալտ) և Հայկ Սուքիասյանը (թավջութակ) «Վերածնունդ» միջազգային 3-րդ մրցույթ-փառատոնում: Եվ այդպես շարունակաբար Գյումրիում վերջին տարիների ընթացքում Ալիսա Արզումանյանի ուսանողներն անընդմեջ մասնակցել են սկսած 2011-2018-ը, նաև ինքն է ժամանակ առ ժամանակ որպես փառատոնի դափնեկիրների ղեկավար-դասախոսի ներկայացված 12 անսամբլների համար: Դասավանդման մանկավարժական գործունեությունից բացի Ալիսա Արզումանյանը շուրջ 20 տարի անընդմեջ աշխատել է որպես կոնցերտմայստեր պրոֆեսորներ Լևոն Բրուտյանի՝ կլառնետի և Կարոյ Դոմբաևի՝ ջութակի մասնագիտական դասարաններում: Նա երաժիշտներին քաջ հայտնի է իր համերգային կատարումներով: Երևանում 2004թ. ՀՀ վաստակավոր արտիստ Աբգար Մուրադյանի կազմակերպած Փողային և հարվածային գործիքների 1-ին մրցույթում Ա. Արզումանյանը մասնակցել է որպես կոնցերտմայստեր և արժանացել է շնորհակալագրի, իսկ մենակատար կլառնետահար Արմեն Ղազարյանը 1-ին մրցանակի:

2012 թ., Բաղ Ռազազ Մայնեֆիլդ Շվեյցարիա «Բացօթյա դասական համերգներ» փառատոնում մասնակցեցին Վլադիմիր Ալեքսանդրի անվան համալսարանի (համալսարանի արտերկրյան հրավիրված 8 երևելի անդամների որոշմամբ), Ա. Արզումանյանը, ԵՊԿ ուսանողներ Անահիտ Բարխուդարյանը (դաշնամուր), Տաթևիկ Ֆրանգուլյանը (ջութակ) և Միքայել Նավասարդյանը (թավջութակ) արժանացան պատվավոր դիպլոմի:

Կարեն Կոստանյանի անվ. 90-ամյակին նվիրված Կամերային անսամբլների կատարողական արվեստի 2-րդ մրցույթում առաջին և 2-րդ պատվավոր տեղերին արժանացել են Ա. Արզումանյանի դաշնամուրային եռյակները՝ 1-ին կարգի ժողա Սարգսյանը (դաշնամուր), Գոհար Պապոյանը (ջութակ) և Հայկ Սուքիասյանը (թավջութակ), 2-րդ կարգի՝ Անի Համբարձումյան (դաշնամուր), Սաշա Աթանյան (ջութակ) և Միքայել Նավասարդյան (թավջութակ) մրցանակների:

Ապրիլի 11-ին ԵՊԿ 4-րդ հարկի դահլիճում Ալիսա Արզումանյանի դասարանային համերգին մասնակցվում էին մտավորականության լայն շերտեր, ոչ միայն ԵՊԿ պրոֆեսորդասախոսական կազմը, այլև նրա շրջանավարտները, այժմյան աշակերտներն ու ուսանողները:

Ա. Արզումանյանի սաները մեծամասամբ միջազգային մրցույթների դափնեկիրներ են կամ ելույթներ են ունեցել եվրոպական երկրների քաղաքների ճանաչված համերգասրահներում:

Այս համերգին ընդգրկված էին ոչ միայն նրա ուսանողները, այլև աշակերտները, որոնք սովորում են Պ. Ի. Հայկովսկու անվ. ՄՄԵԴ-ի Ա. Արզումանյանի կամերային դասարանում: Նրանց եկել էին ունկնդրելու նաև այդ դպրոցի ուսուցչական աշխատակազմից: Առաջինը ելույթ ունեցան Գայանե Սահակյանը (դաշնամուր, նա արդեն 2011-ին Փարիզում կայացած «Flame» երիտասարդ կատարողների միջազգային մրցույթ-փառատոնում արժանացել է 1-ին հատուկ մրցանակի), Միքայել Աղաջանյանը (ջութակ, մանկահասակ տարիքում համերգներ է ունեցել Շվեյցարիայի, Իտալիայի,

Գերմանիայի մի շարք քաղաքներում) և Արման Պողոսյանը (թավջութակ, «Վերածնունդ» միջազգային մրցույթի դափնեկիր՝ 2-րդ մրց.): Նրանք կատարեցին Յ. Պարկերի Սյուիտից 3-րդ մասը՝ Մենուետը:

Լ. Վ. Բեթհովենի ջութակի և դաշնամուրի Սոնատը կատարեցին Գոհար Պապոյանը (ջութակ) և Իռեն Սարգսյանը (դաշնամուր): Իռեն Սարգսյանը Առնո Բաբաջանյանի պատանի և երիտասարդ դաշնակահարների միջազգային մրցույթ-փառատոնում 2013 թ. 4-րդ և 2017-ին՝ 3-րդ մրցանակների է արժանացել, 2015-ին Բ. Ղվարյունասի միջազգային մրցույթում դիպլոմի և Մոսկվայում մասնակցել է 2019 թ. Կրայնի անվ. միջազգային մրցույթին:

Ջութակահար Գ. Պապոյանը շրջանավարտ է և ուսման տարիներին (24.8.2014-ին) Գերմանիայի Բոիլեն *Türingische Sommerakademie* Միջազգային կամերային երաժշտության փառատոնում Ա. Արզումանյանի ուսանողներ ժողա Սազայանի (դաշնամուր), Հայկ Սուքիասյանի (թավջութակ) հետ մասին, որպես եռյակի ջութակահար արժանացել է դիպլոմի մասնակցության համար: Այդ մրցույթի ՀՀ միակ ներկայացուցիչներն էին: Իր առաջին մրցանակը, որպես անսամբլիստ ստացել է 2013-ին Կարեն Կոստանյանի անվ. մրցույթում, որը արդեն հիշատակել ենք վերևում:

Լ. Վ. Բեթհովենի դաշնամուրային Կվարտետը (Դոմաժոր) կատարեցին Կրիստինա Չեչենյանը (դաշնամուր), Գեորգի Գասպարյանը (ջութակ), Դավիթ Այդիյանը (ալտ, նա 2014-ին Գյումրու «Վերածնունդ» միջազգային մրցույթում արժանացել է դիպլոմի, 2017-ին՝ Թբիլիսիում, «Հարմոնիա» միջազգային մրցույթի 1-ին մրցանակակիր է), նվագախմբի արտիստ Հովիկ Օզանեզով (թավջութակ):

Ե. Լալո՝ դաշնամուրային 1-ին Տրիոն, նույնպես փայլուն հնչեցրեցին Հասմիկ Հովսեփյանը (դաշնամուր), Դիանա Մետրոպոլյանը (ջութակ), Հովիկ Օզանեզովը (թավջութակ):

Հասմիկ Հովսեփյանը՝ 2014-ին Գյումրու «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնի Կամերային անսամբլ անվանակարգում արժանացել է 3-րդ և 2017-ին դուետ անվանակարգում՝ 2-րդ մրցանակների:

Ջութակահարուհի Դիանա Մետրոպոլյանը 2018-ին Երևանում կազմակերպած «ՀԲԸՄ» կողմից «Բացահայտում ենք տաղանդներ» մրցույթում, արժանացել է 3-րդ մրցանակի:

Նշանակալի էր Գ. Մալերի դաշնամուրային Կվարտետ կատարումը, որոցնտ Շողիկ Ղազարյան (դաշնամուր), Պոլինա Շարաֆյան (ջութակ), Լիլի Սևոյան (ալտ), նվագախմբի արտիստ Հովիկ Օզանեզով (թավջութակ):

Պոլինա Շարաֆյանը դեռ սովորում է Պ. Հայկովսկու անվ. ՄՄԵԴ-ում, սակայն հասուն մենաբանեց մալերյան երաժշտությունը: Նա Մոսկվայում 2014 թ. «Շչելկուչիկ» պատանի երաժիշտների միջազգային մրցույթում դիպլոմի է արժանացել, նաև «Դելփյան խաղերում» 2016-ին 2-րդ մրցանակակիր է և 2015-ին՝ Աուերի անվ. ջութակահարների միջազգային մրցույթում դափնեկիր:

Ռ. Շումանի դաշնամուրային Կվարտետը՝ op. 47, կատարեցին համահունչ կոմպոզիտորի մտահղացմանը՝ Մարիամ Զոհրաբյանը (դաշնամուր), Դավիթ Հակոբյանը (ջութակ), Լիլի Սևոյանը (ալտ), Հովիկ Օզանեզովը (թավջութակ):

Մարիամ Զոհրաբյանն արժանացել է 2010-ին «Flame» միջազգային մրցույթում՝ Փարիզում, 2-րդ, 2017-ին՝ Բեռլինի Կոմիտաս փառատոնում 3-րդ, 2015-ին՝ Գյումրու «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնում դուետ անվանակարգում 1-ին մրցանակների: Ջութակահար Դավիթ Հակոբյանը բազմաթիվ համերգներով հանդես է եկել շրջաօթյուններով՝ ԱՄՆ-ում, Իտալիայում, Գերմանիայում, Լիբանանում, Կանադայում, Հունաստանում, Լիտվայում: Նա մասնակցել է նաև հեղինակավոր մրցույթների և ստացել 2010-ին Ավետ Գաբրիելյանի և Սարգիս Ասլամազյանի ջութակահարների մրցույթում 1-ին, 2018-ին Գյումրու «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնում՝ Կամերային անսամբլ անվանակարգում 1-ին, նույն թվականին, Երևանում կազմակերպած «ՀԲԸՄ» կողմից «Բացահայտում ենք տաղանդներ» մրցույթում 1-ին մրցանակներ: Ալտահարուհի Լիլի Սևոյանը 2017-ին Գյումրու «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնում արժանացել է 1-ին մրցանակի, 2018-ին «Հարմոնիա» միջազգային մրցույթում, Թբիլիսիում (Վրաստան) դիպլոմի:

Դիտավորությամբ նշեցինք Ալիսա Արզումանյանի դասարանում սովորողների անցած ուղին ստացած մրցանակները, ակնառու դարձնելու պատասխանատվության մեծ զգացում թե՛ ուսանողների ու թե՛ դասախոսի վերաբերվելու երաժշտական կատարողական արվեստին և մատաղ սերնդին դաստիարակելուն: Համերգային ծրագրում նկատելի էր նաև ավագ մասնագետների պրոֆեսիոնալ մասնակցությունը լավագույնս ներկայացնելու այն բարդ ծրագիրը, որ նախատեսել էր դասարանի ղեկավարը: Խոսքը վերաբերվում է Ա. Արզումանյանի գործընկեր, դաշնամուրային կատարողական իր արվեստով ճանաչված, որոցնտ Շողիկ Ղազարյանին և կամերային անսամբլի լավագույն արտիստ, Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի նվագախմբի թավջութակահարների 2-րդ կոնցերտմայստեր, Կամերային ամբիոնի լավագույն ուսումնական ասիստենտ՝ Հովիկ Օզանեզովը:

ԳՐԱՐ ԸՆԳՈՅԱՆ «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադիր-համարի թողարկման պատասխանատու



Գ. Մալերի դաշնամուրային Կվարտետ, Շողիկ Ղազարյան, Պոլինա Շարաֆյան, Լիլի Սևոյան, Հովիկ Օզանեզով



Լ. Վ. Բեթհովեն՝ դաշնամուրային Կվարտետ, Կրիստինա Չեչենյան, Գեորգի Գասպարյան, Դավիթ Այդիյան, Հովիկ Օզանեզով



Լ. Վ. Բեթհովեն՝ Սոնատ ջութակի և դաշնամուրի համար, Գոհար Պապոյան (ջութակ), Իռեն Սարգսյան (դաշնամուր)



Ե. Լալո՝ դաշնամուրային 1-ին Տրիո, Հասմիկ Հովսեփյան (դաշնամուր), Դիանա Մետրոպոլյան (ջութակ), Հովիկ Օզանեզով (թավջութակ)



Ռ. Շուման՝ դաշնամուրային Կվարտետ op. 47, Մարիամ Զոհրաբյան (դաշնամուր), Դավիթ Հակոբյան (ջութակ), Լիլի Սևոյան (ալտ), Հովիկ Օզանեզով (թավջութակ)



Ալիսա Արզումանյանի սաները և գործընկերը՝ որոցնտ Շողիկ Ղազարյանը



Յ. Պարկեր՝ Մենուետ Սյուիտից, Գայանե Սահակյան (դաշնամուր), Միքայել Աղաջանյան (ջութակ), Արման Պողոսյան (թավջութակ)

ԵՊԿ դասախոսները Կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղում



ԵՊԿ և ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի դասախոսներ



ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի դասախոսները ծանոթանում են «Երաժիշտ» ամսաթերթի վերջին համարների հետ

Ապրիլի 16-ին ԵՊԿ ֆուլկլորագիտության ամբիոնի նախաձեռնությամբ, կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղում կայացավ յուրահատուկ հանդիպում, որը կրում էր գիտագործնական, ուսումնամեթոդական բնույթ՝ հիմնականում նպատակ ունենալով ներկայացնելու ամբիոնում ծավալվող բազմաբնույթ աշխատանքներն ու դրանց կարևորագույն արդյունքները: Ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Նունե Աբանայանը, դասախոսներ՝ Մարիաննա Տիգրանյանն ու Կարինե Բրուտյանը հանգամանորեն անդրադարձան ամբիոնի գործունեության վերջին տարիների ձեռքբերումներին, ուսումնամեթոդական ծրագրերի մշակումներին, ուսանողների զնահատման առավել արդյունավետ կանոնակարգերին, գիտական հրատարակություններին:

Բանախոսների արծարծած բազմաթիվ հարցեր ու խնդիրներ մեծապես հետաքրքրեցին ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի տեսական բաժնի դասախոսներին, որոնք ոչ միայն ծանոթացան ֆուլկլորագիտության, աշուղագիտության, հոգևոր երաժշտության արդի հիմնախնդիրներին, այլև հանդես եկան համատեղ ուսումնական, գիտատեղեղծագործական աշխատանքների կազմակերպման, համակարգման աշխատանքների առաջարկով: Մասնավորապես, խոսվեց Շիրակի տարածաշրջանում համատեղ բանահավաքական գիտարշավախմբերի կազմակերպման, դասագրքերի կազմման ու գիտաժողով-սեմինարների անցկացման մասին:

Հանդիպումն առաջացրեց երկուստեք հետաքրքրություն և ստեղծեց հետագա համագործակցության բարենպաստ նախադրյալներ:

Յ.Գ. Նրանց այցելության միջոցով նաև շարունակվում է ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի գրադարանի համալրումը «ԵՊԿ հրատարակչության» տպագրած նյութերով «Երաժիշտ» ամսաթերթի, «Երաժշտական Հայաստան» գիտական ամսագրի համարներից, նախապես նաև 7 տարի ընդմիջված ԵՊԿ դասախոսների ուսումնամեթոդական աշխատանքների ժողովածուի հերթական պրակի լույս ընծայումից, որտեղ տպագրվում էին նաև Գյումրու մասնաճյուղի դասախոսների հոդվածները: «ԵՊԿ հրատարակչություն»ը ապահովել է նաև այն գրականությամբ, որ նվիրատվության կարգով ուղարկել էր Նյու-Յորքից ամերիկացի միջնադարագետ, կոմիտասագետ, երաժշտագետ, կոմպոզիտոր, խմբավար Գրիգոր Փիտեճեանը: Հայ իրականության մեջ հրատարակված առաջին անգամ դասագիրք՝ հայ հոգևոր կամ առավել հստակ հայ եկեղեցական երաժշտության «Հայ եկեղեցու պատմությունը» երկու լեզվով հայերեն և անգլերեն, որով թարգմանատերմիաբանական շատ խնդրահարույց հարցեր է լուծել: Այն կարևորագույն աշխատություն է, որ լրացրեց հայ երաժշտագիտության բացը: Նման կարևոր աշխատություն է նաև նրա «Քրիստափոր Կարա-Մուրզա» ստվար աշխատությունը, որը նույնպես նվիրաբերվեց, նաև որ հրատարակվել է «ԵՊԿ հրատարակչություն»ում:



Մ. Բրուտյան, Մ. Տիգրանյան, Ն. Աբանայան, Գ. Հարությունյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

1 Երեվանի Կոմիտասի անվան Կոնսերվատորիան Ապրիլի 24-ին



Ապրիլի 24, 2019 թ.

Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական Թեմի Ս. Սարգիս եկեղեցու՝ Պատարագը՝ Հիշատակ սրբոց նահատակաց մերոց, որք կատարեցան յընթացս Հայոց Ցեղասպանությանը վասն հաւատոյ

Յուրաքանչյուր տարի, Ապրիլի 24-ին ազգովի համայն աշխարհով և ոչ միայն ազգովի այլ նաև մարդկության մեծամասնությունն, ով անհանդուրժողական է Ցեղասպանության արատավոր երևույթի հանդեպ ցավում է համայն հայության հետ: 2015 թվականի նահատակաց Սրբացման արարողակարգով Հայ Առաքելական եկեղեցին կիսեց մեր վիշտը: Մեր եկեղեցին կատարում է սրբերի փառաբանման արարողակարգ այդ օրվա խորհրդով Պատարագի խորհրդով:

Յուրաքանչյուր տարի, Ապրիլի 24-ին ազգովի համայն աշխարհով և ոչ միայն ազգովի այլ նաև մարդկության մեծամասնությունն, ով անհանդուրժողական է Ցեղասպանության արատավոր երևույթի հանդեպ ցավում է համայն հայության հետ: 2015 թվականի նահատակաց Սրբացման արարողակարգով Հայ Առաքելական եկեղեցին կիսեց մեր վիշտը: Մեր եկեղեցին կատարում է սրբերի փառաբանման արարողակարգ այդ օրվա խորհրդով Պատարագի խորհրդով:



Անուշ Կիրակոսյան, Գոհար Շադոյան, Կարինե Բրուտյան, Վահե Գևորգյան

Ի Ր Ա Գ Ո Ր Ծ Վ Ա Ծ Ե Ր Ա Զ Ա Ն Ք Ը

Ապրիլի 19-ին հանդիսավոր բացվեց ԵՊԿ Կատարողական արվեստի ամբիոնի Միջառարկայական Մասնագիտացման Կենտրոնը՝ ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Եփրեմյանի նախաձեռնությամբ և ԵՊԿ ռեկտորատի օգնությամբ: Առաջին վարպետության դասը՝ դասախոսությամբ վարեց ՀՀ Մշակույթի վաստակավոր գործիչ, ազգագրագետ Լևոն Աբրահամյանը: Իրեն հատուկ ազատ ոճով, մեղմ ժպիտով, կարծես իմիջալոց, նա հայի տեսակի վերաբերյալ այնպիսի համարձակ հիպոտեզ առաջարկեց, որ դեռ շատ պետք է խորհեմք այդ մասին: Լսարանը ամենատարբեր գիտական և ուսումնական կենտրոններից հավաքված հետաքրքրասեր մարդիկ էին, «պահանջեց շարունակել բանկերը», հույսեր փայփայելով, որ բանախոսը նորից հանդես կգա Կենտրոնում:

Այդ անձրևոտ օրը կոնսերվատորիան դարձել էր կենտրոնաձիգ ինտելեկտուալ մի համակարգ, որն «եղանակ էր ստեղծում» գիտական ասպարեզում: Կենտրոնի ղեկավար Լիլիթ Եփրեմյանը բացման խոսքում մասնավորապես ասաց. «Ս. Զատիկի հրաշքի սպասումով և Թավշյա հեղափոխության տարելիցի նախօրեին բոլորս լցված ենք մեծ հույսերով և հավատով: Սակայն եթե մինչև ապրիլյան փոփոխության օրերը դա բնագոյան հավատ էր մշուշի մեջ հազիվ ուրվագծվող վաղվա օրվա հանդես, որը մեր դեպքերի հրապարակման մեջ գրեթե հիմքեր չունեն, ապա հիմա կարող ենք խոսել իրագործված երազանքների, իրական հաղթանակների մասին: Եվ այդ հաղթանակները կոնկրետ մարդկանց անուններով են պայմանավորված: Երբ նույնների սկզբին Կոնսերվատորիայում փոխվեց ղեկավարությունը, ռեկտորի պաշտոնակատար Սոնա Հովհաննիսյանը շուտով ինձնից մի գործընկեր ստացավ, որ վերնագրված էր. ԻՍ ԵՐԱԶԸ: Խոսքը ԵՊԿ Միջառարկայական մասնագիտացման կենտրոն ստեղծելու նախագծի մասին էր, որը բուհական երաժշտագիտական միտքը կազմակերպող արհեստական կապակցներից, գաղափարների սահմանափակումից, դոգմատիզմից և չհիմնավորված առաջնահերթություններից: Սա մի ծրագիր է, որն ոլորտի զարգացման անհրաժեշտ պայման է համարում մետահամակարգային մոտեցումը, երբ երաժշտությունն ուսումնասիրող գիտությունը դիտարկվում է հարակից կամ ոչ հարակից ոլորտների հետ ամբիջական կապով և անհրաժեշտ ներգործության համատեքստում: Հետագայում են նշանակվեցի Կատարողական արվեստի տեսության և պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար և սկսեցի զարգացնել այս ծրագիրն ամբիոնում: Հիմա, երբ 2 օր առաջ լրացավ իմ պաշտոնավարման 100 օրը, ամբիոնի բոլոր այլ կարևորագույն առաջնահերթությունների հետ մեկտեղ՝ Մանկավարժական պրակտիկայի, նոր գնահատման համակարգի, նոր ուսումնական ծրագրերի քննարկման և իրականացման հետ մեկտեղ ես երջանիկ եմ հայտարարելու Միջառարկայական Մասնագիտացման Կենտրոնի ծրագրի մեկնարկի մասին, ինչի համար շնորհակալություն եմ հայտնում ռեկտորատին, մասնավորապես ռեկտորի պաշտոնակատար Սոնա Հովհաննիսյանին և գիտության գծով պրոռեկտորի պաշտոնակատար Ծովինար Մովսիսյանին՝ իմ գաղափարին և կազմակերպչական ունակություններին վստահելու համար»:



Լևոն Աբրահամյան 19.04.2019 թ., ԵՊԿ, Ակուստիկ լաբորատորիայում



Լիլիթ Եփրեմյան, Լևոն Աբրահամյան 19.04.2019 թ., ԵՊԿ, Ակուստիկ լաբորատորիայում

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆԱԿԱՅԻՆ ԱՐՈՒՅԱՆԸ ԵՎ ԶԳՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՈՒՑՈՒԹՅԱՆ ՄՇԿՈՒՄԸ

Սակայն, եթե Քանաքեռում Արոյանը ծանոթանում էր ժողովրդի բառ ու բանին, ապա էջմիածնում, որտեղ փոխադրվել էր տասը տարին դեռ չլրացած ուսում ստանալու նպատակով, ծանոթացել է հայկական հոգևոր երաժշտությանը իր ամբողջ էությունը:

Ինչպես փաստում են մի շարք գրավոր աղբյուրներ, Արոյանը երաժշտական մասնագիտական կրթություն ստացել է Դորպատում: Չայտնի է, որ իս. Արոյանի համար շրջադարձային են եղել Դորպատում ուսումնառության տարիները: Այստեղ է նա գինվել գիտելիքների մեծ պաշարով, որոնք աղբյուր են հանդիսացել լուսավորչական գաղափարների իրագործման համար: Անկախ առաջացող դժվարություններին, իս. Արոյանը պարբերաբար փորձել է ձեռք բերել երաժշտատեսական գիտելիքներ՝ հայրենի ժողովրդի երաժշտական մշակույթն ուսումնասիրելու համար: Բայց և այնպես, փաստն այն է, որ իր աշխատասիրության, երաժշտության նկատմամբ մեծ սիրո շնորհիվ, Արոյանը այնքան է հմտացել երաժշտության բնագավառում, որ 1834 թ. փետրվարի 13-ին Դորպատի Յամալսարանի դահլիճում կայացած համերգին, 150 հոգուց բաղկացած երգչախմբի կազմում կատարել է Յաննի «Յաննի Ալեքսանդրի կամ գործարար երաժշտության» ստեղծագործությունը (Պ. Յաննի «Նախատուր Արոյան կյանքը, գործը, ժամանակը (1809-1836 թթ.)», Եր., 1967թ., էջ 584): Նշենք որ, համերգը ղեկավարել է աստվածաբանության ուսանող, երաժիշտ-խմբավար Յոզեֆ Ամադեուս Կոխլայֆը (1806-1837 թթ.): Թերևս այս համագամանքը փաստում է այն մասին, որ նա բավականին հմտացած է եղել երգեցողության մեջ: Սակայն, ինչպես հայտնի է, Արոյանը տիրապետել է նաև մի քանի նվագարանների կատարողական վարպետությանը: Չայտնի երկրում Արոյանը սովորել է նվագել սրինգ, իսկ Դորպատում՝ շոֆարմոն, կիթառ և դաշնամուր:

Ստորև հարկ ենք համարում մեջ բերել Արոյանի Յ. Ա. Կոխլայֆին գրած նամակից մեկ հատված. «Մեր միջանց հետ ունեցած տեսակցությունից հետո Ձեզ հայտնի է, թե որքան մեծ է իմ հետաքրքրությունը երաժշտության վերաբերմամբ և որքան եմ ցավում, որ որոշ ունակություններ չեն ձեռք բերել այդ բնագավառում: Այս ցանկությունը թեև մասամբ վերաբերվում է իմ անձնական ցանկությանը, սակայն ավելի մեծ չափով բխում է նրանից, որ ես կարողանամ որոշ գիտելիքներ տանել դրա վերաբերյալ իմ եկեղեցու և, միաժամանակ, իմ ազգի համար, որը, կարծես, ամբողջովին կտրված է այդ հրաշալի արվեստից: Ինձ անհրաժեշտ էր միայն այնքան սովորել, որ կարողանայի, գոնե, նվագակցել մի հասարակ երգի և, միևնույն ժամանակ երգել, սակայն իմ գործ դրած բոլոր ջանքերն ու ձգտումները մինչ այժմ, կարծես ապարդյուն են: Այստեղ ժամանակը շատ կարճ է ինձ համար, որպեսզի ես կարողանայի հուսալ, թե կարողանամ ապագայում հետզհետե այդ աստիճանին հասնել, իսկ մեր երկրում միանգամայն անհնարին կլինի, որ ես առիթ ունենամ իրագործելու: ...Եթե ժամանակը թույլ է տալիս Ձեզ ինձ փոքր ինչ օգնելու, ապահով եղեք, որ ես Ձեր ջանքերի հատուցումը կտամ» (Իս. Արոյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 6, Եր., 1961 թ., էջ 159):

Արդյոք իրականացել է Արոյանի այս ցանկությունը մինչ օրս հայտնի չէ: Բայց և այնպես, Ե. Չարենցի անվան Գրականության և Արվեստի թանգարանի Արոյանի արխիվում 144 թվահամարի տակ պահվող նյութերի հետ միասին կա մի տետր 15 էջից բաղկացած, որի անվանաթերթին գերմաներեն գրված է. «Երաժշտության մասին, 1835 թ. 21 սեպտեմբեր, Դորպատ»: Այն գերմաներեն գրված շարադրանք է երաժշտության տեսության մասին: Առաջին անգամ իրատարակվել է 2013 թ. «Հայկական հարց» հանդեսում, Աննա Չերչինյանի հայերեն թարգմանությամբ (Ա. Չերչինյան, «Նախատուր Արոյան – նորահայտ էջեր», Հայկական հարց 2013 թ., 2(3), էջ 37-43): Թե ումից է Արոյանը գրառել այս նյութը հայտնի չէ: Պ. Յաննի գրում է, որ հավանաբար Յոհան Բենիամին Գրոսից (1809-1848 թթ.) (Պ. Յաննի, «Նախատուր Արոյանի կենսագրության առեղծվածները», Ս. Էջմիածին, 1997 թ., էջ 465): Վերջինիս մասին Արոյանը գրել է. «Այն քիչը, ինչ որ առ այս տեսնում եք, ես պարտական եմ բազմավաստակ, անվանի երաժիշտ պարոն Գրոսին, իմ մեծարգո բարեկամին և ուսուցչին...» (Իս. Արոյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 6, Եր., 1961 թ., էջ 105): Այս խոսքերը տեղիք են տալիս մտածելու, որ իսկապես վերը նշված նյութը Արոյանը գրի է առել Յ. Բ. Գրոսից:

Յ. Բ. Գրոսի անվան հետ է կապված նաև Արոյանի գործունեության մի շատ կարևոր դրվագ: Ինչպես վկայում է ինքը Արոյանը Գրոսի դրոշմով է նա հեղինակել հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտության մասին հոդվածը: Այս հոդվածը Արոյանը գրել է 1840 թ., որից ցավոք պահպանվել է միայն սևագիր տարբերակը, որից էլ բացակայում են մի շարք կարևոր հատվածներ (այս պարզ է դառնում հոդվածի շարադրանքից): Հոդվածի նպատակը, ինչպես կարելի է ենթադրել Արոյանի գրվածքից, եղել է Եվրոպայի զարգացած հասարակությանը հայ երաժշտական մշակույթը ներկայացնելը:

Ստորև կփորձենք ներկայացնել իս. Արոյանի վերոհիշյալ հոդվածից պահպանված հատվածների ընդհանուր նկարագիրը.

✦ Ընդգծել է հայկական արվեստի և մասնավորապես

երաժշտարվեստի ինքնուրույնությունը

✦ Նշել է հայ հոգևոր երաժշտության ծայնեղանակների անվանումները

✦ Տվել է հոգևոր երգերի տեսակների բնորոշումը

✦ Ներկայացրել է հայկական ժողովրդական երգերի հիմնական թեմատիկան և բովանդակությունը

✦ Տվել է հայ աշուղական արվեստի ընդհանուր նկարագիրը (աշուղական երկու սիրավեպի նկարագրություն՝ «Ուրիպ» և «Քյարամ»)

Ինչպես նաև է հոդվածի բովանդակությունից, իս. Արոյանը կցել է նաև հայկական հոգևոր և ժողովրդական երգերի նմուշներ, որոնք ինչպես գրում է Պ. Յաննի. «...Եվրոպական ծայնեղանակներով, անտարակոյս, Արոյանի բերանից, գրի է առել նրա մտերիմ ընկերն ու բարեկամը՝ երաժիշտ-երգահան Յոհան Բենիամին Գրոսը» (Իս. Արոյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 6, Եր., 1961 թ., 367):

Ցավոք սրտի, վերոհիշյալ երգերից և ոչ մեկը չի պահպանվել: Սակայն իս. Արոյանի արխիվում պահվում է հայ հոգևոր երգի մի ծայնագրություն: Այդ հոգևոր երգը «Խնկարկություն» շարականն է («Յայս յարկ նուիրանաց ուխտի տեառն տաճարի...»), որը Արոյանի կատարումից ծայնագրել է Էմիլ Ավգուստ Չայնրիխ Չյորշելմանը (1810-1854 թթ.), հավանաբար 1834 թ. հունիսին:



Բարեբախտաբար այս երգի ծայնագրման ընթացքի, մշակման փորձի մասին պահպանվել է մի շատ կարևոր վավերագիր, այն է Յոհան Ֆրիդրիխ Բենիամին դե լա Տրոբի (1769-1845 թթ.) նամակը ուղղված Արոյանին, գրված 1834 թ. հունիսին: Քանի որ նամակը բավականին ընդարձակ է, մենք կփորձենք անդրադառնալ նամակում ներկայացվող մի քանի հարցերի միայն:

Նախ և առաջ, կարևոր խնդիր է այն, թե ինչպես է ծայնագրվել հայկական եկեղեցական երգը Արոյանի կատարմամբ եվրոպացի երաժշտի կողմից:

Այն ծայնագրությունը, որը պահվում է Արոյանի արխիվում իրենից ներկայացնում է բազմաձայն շարադրանքի համար գրված մեղեդի և գերմաներեն տառադարձությամբ երգի բառերը: Մենք կարծում ենք, որ սա ոչ թե երգը ծայնագրողի Չյորշելմանի նոտագրած տարբերակն է, այլ Տրոբի, ով պետք է բազմաձայններ այն: Վերոնշյալ նամակում Տրոբը գրում է. «...պարոն Չյորշելմանը, որն այդ երգը գրի է առել, լսելով Ձեր բերանից, հավաստիացնում է ինձ, որ նա ստիպված է եղել այդ եղանակն ավելի ևս պարզեցնել, որպեսզի որոշ չափով հարմարեցնի մեր չկալային, քանի որ անհնարին էր այդ երգը գրի առնել այնպես, ինչպես երգվում է ընդհանր, ոչ միայն տարօրինակ ձևով շատ ավելի զարդարուն է երգվում, այլ բաղկացած է նաև տասանվոր բարդ հնչյուններից, որը միանգամայն ի չիք է դարձնում իմ ցանկացած աշխատանքի հնարավորությունը» (Ե. Շահագիզ, «Դիվան Նախատուր Արոյանի», հատոր II, Եր., 1834 թ., էջ 131):

Այսպիսով, ակնհայտ է, որ երգը չի ծայնագրվել այնպես, ինչպես երգել է Արոյանը, որը շատ կարևոր խնդիր է երգը ուսումնասիրելու գործում: Այնուամենայնիվ, կարող ենք նշել, որ պահպանված երգը ընդհանուր առմամբ հեռու է հայ եկեղեցական երաժշտությունից: Այդուհանդերձ կան որոշ մեղեդիական և ռիթմիկ դարձվածքներ, որոնք մասնություններ ունեն հայ հոգևոր երգարվեստի երաժշտամտածողության հետ:

Ի վերջո, փաստն այն է, որ Տրոբը մի քանի փորձեր անելուց հետո հրաժարվել է մշակել այդ երգը: Նամակում Տրոբն առաջարկում է նաև հայ հոգևոր երաժշտության բարելավման տարբերակներ, որոնք մեր կարծիքով այնքան էլ ճիշտ չեն:

Այս երգի վերաբերյալ ստորև կփորձենք ներկայացնել ևս մեկ հետաքրքրական փաստ: Չայտնի չէ թե ինչպես Արոյանը ունեցել է իր սեփական ձեռագիր շարակնոցը, որը սկսվել է հենց այս երգով: Այս շարակնոցը 1831 թ. մարտի 5-ին ի նշան երախտագիտության Արոյանը նվիրել է Դորպատի Յամալսարանի գրադարանին: Պատճառն այն է, որ 1831 թ. փետրվարին գրադարանի վարիչ Կարլ Մորգենշտեդը հրատարակել էր հոդված Արոյանի մասին:

Ցավոք սրտի Արոյանի արխիվում այս շարակնոցի պատճենը չկա: Մենք կարծում ենք, որ հետագայում դրա ձեռք բերումը շատ կարևոր քայլ կլինի արվեստագիտության համար:



Չայտնի է միայն, որ այս Շարակնոցը 1650 թ. Քանովա ավանի Սուրբ Նշան վանքում ընդօրինակել է Բարդան Սեբաստացին (Պ. Յաննի, «Նախատուր Արոյանի կենսագրության առեղծվածները», Ս. Էջմիածին, 1997 թ., էջ 422):

Դառնալով Արոյանի հեղինակած վերոնշյալ հոդվածին, ստորև կփորձենք ներկայացնել նաև դրա պատմական նշանակությունը: Այս առումով կարևոր է երաժշտագետ Ս. Մուրադյանի տեսակետը, ով մի առիթով անդրադառնալով Արոյանի հեղինակած ուսումնասիրությանը, գրել է, որ դա առաջին հոդվածն է XIX դարի առաջին կեսի հայ երաժշտության պատմության մեջ և առաջին միակը, որի մեջ հոգևոր երգերի հետ միաժամանակ հատուկ տեղ է հատկացվել հայ ժողովրդական և աշուղական երաժշտությանը, գործին լավատեղյակ մարդու մոտեցմամբ բնութագրված են նրանց բնորոշ գծերը... (Ս. Մուրադյան, «Հայկական երաժշտական մշակույթի պատմություն» 3. 2, Եր., 1970 թ., էջ 48):

Ահա այս էր իս. Արոյանի հեղինակած հոդվածի պատմական նշանակությունը, որը ցավոք սրտի մեթոդա երաժշտագետները չեն վկայակոչում:

Նշենք նաև, որ Արոյանը ոչ միայն բանահյուսական նմուշների կատարող և ուսումնասիրող էր, այլ նաև բանահավաք: Արոյանը տարբեր առիթներով գրել է ժողովրդական բանահյուսության գրառման և ուսումնասիրման խնդրի մասին: «Էստե էլ մուրագս հենց էն ա էլել,- գրում է Արոյանը, -որ գնամ, ընկնիմ մեկ իշխանի ոտք, սասեմ, ինձ մեկ կտոր հաց տա, ու ես՝ գիշեր-ցերեկ ընկնիմ գեղեզեղ ու մեր ազգի արած բաները հավաքեմ, գրեմ» (Իս. Արոյան, Հայ դասականի գրադարան, Երևան-1984 թ., էջ 11):

Սակայն առանց որևէ մեկի աջակցություն ստանալու Արոյանը գրառել է հայ, մասամբ էլ իրանական ժողովուրդների բանահյուսության նմուշներ, որոնցով հարուստ են նրա ստեղծագործությունները: Արոյանի գրառած բանահյուսական նմուշներն ու ազգագրական նյութերը ոչ միայն աղբյուր են հանդիսացել իր այլ նաև օտարազգի հեղինակների համար, որոնց թվում՝ գերմանացի ճանապարհորդներ՝ Ավգուստ Ֆոն Չաբստհաուզենը (1792-1892 թթ.), Ֆրիդրիխ Բոնենշտեմը (1819-1892 թթ.): Վերջինիս խնդրանքով Արոյանը նրան հանձնել է իր գրառած հայ ժողովրդական երգերի տետրեր, գերմաներեն ծանոթագրություններով: Սակայն, քանի որ, Արոյանը դեռ այնքան չէր հմտացել, որպեսզի գրառեր երգի մեղեդին, այդ պատճառով նա գրանցում էր միայն բառերը:

Ուսումնասիրության վերջում կփորձենք ներկայացնել Հայ երաժշտության բարեմոտորիչ Կոմիտաս Վարդապետի և իս. Արոյանի առասպելական կապը:

Ինչպես փաստում են որոշ գրավոր աղբյուրներ, Կոմիտաս Վարդապետը Արոյանի նկատմամբ ունեցել է հատուկ վերաբերմունք: Այս փաստի դրսևորումներից մեկն այն է, որ Կոմիտասը ճեմարանում ուսանելու տարիներին առաջին անգամ ընթերցելով «Վերք Հայաստանին», այնքան է տպավորվել, որ Հ. Աճառյանի (1876-1953 թթ.) հետ այցելել է Քանաքեռ՝ Արոյանի հայրենի գյուղը, որը Հ. Աճառյանի հավաստմամբ հետագայում եղել է Վարդապետի ամենասիրելի գյուղերից մեկը (Հ. Աճառյան, «Հուշեր Կոմիտասի մասին», //Էջմիածին, ԺԲ (Դեկտեմբեր), 1969 թ., էջ 23-26): Սակայն առավել հետաքրքրական է այն նկատմանքը, որը ներկայացնում է Ա. Մեսրոպյանը (1891-1954 թթ.): Ա. Մեսրոպյանի հավաստմամբ, մի առիթով Կոմիտասը ասել է թե «...մեծանուն Նախատուր Արոյանը հայ ժողովրդական երաժշտությունը հետազոտող՝ երգիչ-երաժիշտ եղած է...» (Ա. Մեսրոպյան, «Կոմիտաս և Արոյանի լուսանկարը», «Ճամանակակիցները Կոմիտասի մասին», Եր., 1960 թ., էջ 236): Հաշվի առնելով որոշ հանգամանքներ, մենք կարծում ենք, որ Ա. Մեսրոպյանի հաղորդած այս տեղեկությունը այնքան էլ ճշգրիտ չէ և առաջին չունի գիտական ստույգ հիմնավորում, բայց և այնպես, կարող ենք փաստել, որ այս խոսքերը իս. Արոյանի գործունեության այդ ոլորտի միանգամայն ճշգրիտ բնորոշումն են:

Այսպիսով, Հայ երաժշտության բնագավառում Արոյանը ծրագրում էր այնպիսի աշխատանքներ, որոնք կարողացան իրականություն դառնալ XIX դ. երկրորդ կեսից միայն, հայ պրոֆեսիոնալ երաժիշտների՝ Ք. Կարա-Մուրադյանի, Մ. Եկմալյանի և Կոմիտաս Վարդապետի կողմից:

ԱՐՏ ԳԵՎՈՐԳՆԱՆ
Երևանի Ա. Բարաքանյանի անվ. պետական երաժշտամանկավարժական թուղթի ժողովրդական գործիչներ բաժնի 3-րդ կուրս

« ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ »

Մայա Աֆրիկյանի հերթական չեմպիոնները

Օպերային երգչուհի, երգահան, միջազգային մրցույթների դափնեկիր Մայա Աֆրիկյանը մարտի 5-10-ը Մոսկվայում մասնակցել է Իվան Տուրգենևի անվ. հիմ-



նադրամի կազմակերպած «Pro արվեստ» բազմաժանր արվեստների միջազգային փառատոն-մրցույթին և «Վոկալ արվեստ. հեղինակային երգ» անվանակարգում արժանացել 2-րդ կարգի դափնեկիր կոչման: Մ. Աֆրիկյանը ներկայացրել է «Ах давно ли гулял я с тобой» հեղինակային երգը գրված Տուրգենևի բանաստեղծության հիման վրա: Նշենք նաև, որ այս նույն մրցույթում, մրցանակի 3-րդ կարգի դափնեկիր կոչման է արժանացել նաև Մայա Աֆրիկյանի կոնցերտմայստեր Լիլիանա Դարբինյանը:



Նույն օրերին, տեսաձայնագրության հիման վրա մասնակցել է Եկատիրինբուրգ քաղաքում անցկացվող «Залог успеха» բազմաժանր արվեստների միջազգային փառատոն-մրցույթին. «Վոկալ արվեստ. հեղինակային երգ» անվանակարգում արժանացել 2-րդ կարգի դափնեկիր կոչման: Երգչուհին ներկայացրել է «Появись моя звезда» հեղինակային երգը Ի. Տուրգենևի բանաստեղծության տեքստով:

մասնակցել է Եկատիրինբուրգ քաղաքում անցկացվող «Залог успеха» բազմաժանր արվեստների միջազգային փառատոն-մրցույթին. «Վոկալ արվեստ. հեղինակային երգ» անվանակարգում արժանացել 2-րդ կարգի դափնեկիր կոչման: Երգչուհին ներկայացրել է «Появись моя звезда» հեղինակային երգը Ի. Տուրգենևի բանաստեղծության տեքստով:



Սոֆյա Միքայելյանի հազոդությունները

Սոֆյա Միքայելյանը Մոսկվայում, փետրվարի 26-ից մարտի 11-ը մասնակցել է «Grand music art» երաժիշտների 6-րդ միջազգային մրցույթում, տեսաձայնագրությունների հիման վրա, երեք անվանակարգերում՝ «Կոմպոզիտորներ», «Դաշնամուր» և «Ժողովրդական գործիքներ, անսամբլներ» և ստացել մրցանակներ: «Կոմպոզիտորներ» անվանակարգում ներկայացրելով «Отражение в трех зеркалах» ֆլեյտայի, ջութակի և դաշնամուրի համար ստեղծագործությունը, արժանացել է 3-րդ կարգի դափնեկիր կոչման:



Սոֆյա Միքայելյան

«Դաշնամուր» անվանակարգում ներկայացրել է իր կատարմամբ հեղինակային «Պոլիֆոնիկ սյուիտ» դաշնամուրի համար ստեղծագործության տեսագրությունը՝ արժանանալով 3-րդ կարգի դափնեկիր կոչման: Նշենք, որ այս սյուիտը 2004 թ. հաղթել է Գ. Սարաջևի անվ. դաշ-

նաճուրային հանրապետական մրցույթում և դարձել պարտադիր ստեղծագործություն նույն մրցույթի համար: 2014 թ. Ս. Միքայելյանի Կոմպոզիցիան «Dies Irae» թեմայով ֆլեյտայի, ուղի, դափի, ջութակի և դաշնամուրի համար, հաղթել է Կալուզայում կայացած «XXI դարի կոմպոզիտոր» միջազգային մրցույթում: Ներկայումս, տեսագրության հիման վրա այս ստեղծագործության կատարումը, «Ժողովրդական գործիքներ, անսամբլներ» անվանակարգում արժանացել է 2-րդ կարգի դափնեկիր կոչման: Ս. Միքայելյանը իր խորհին շնորհակալությունն է հայտնում իր «MEGEDAS» անսամբլի կատարողներին Գևորգ Մուրադխանյանին (ֆլեյտա), Դավիթ Գրիգորյանին (ուղի), Մեսրոպ Խալաթյանին (դափ), Աննա Մանուկյանին (ջութակ) և Սոֆյա Միքայելյանին (դաշնամուր):




Կոմպոզիտոր-դաշնակահարն իր նվիրյալ աշխատանքի շնորհիվ գրանցում է նորանոր հաջողություններ, որոնք վստահ եմ կլինեն շարունակական:

ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ երաժշտագետ

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր



Առաջին անգամ լույս է տեսել ԵՊԿ պրոֆեսոր, Ֆոլկլորագիտության ամբիոնի երկարամյա ղեկավար, արվ. թեկնածու, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ալինա Փահլևանյանի «Հայ երաժշտության ֆոլկլորագիտության արդի խնդիրները» դասագիրքը: Նպատակն է ֆոլկլորագիտության արդի խնդիրները ներկայացնել բարձր գեղագիտական կատեգորիաների սահմաններում: Աշխատության մեջ առաջին անգամ առաջարկվում է նոտագրության լրացուցիչ նշանների համակարգ, որոնք թույլ են տալիս ապահովել ժողովրդական երաժշտության մոտիվների առավել ստույգ և մանրամասն նոտագրումը: Դասագիրքը հրատարակվել է ԵՊԿ Գիտ-խորհրդի որոշմամբ և մշակված է մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողների մեկ կիսամյակի դասընթացի համար: Տպագրությունն իրականացվել է «Տիգրան Մեծ» հրատարակչությունում, հրատարակիչ՝ «Ամրոց Գրուպ» ՍՊԸ: Մասնագիտական խմբագիր՝ արվեստագիտության դոկտոր Աննա Արևշատյան:



Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտական դպրոցի շվիի դասատու, միջազգային և հանրապետական մրցույթների դափնեկիր Հելբերտ Ասատրյանը:



Ուսումնական ձեռնարկ-ժողովածու կոչվում է «Պատանի շվիահար»՝ նախատեսված երաժշտական դպրոցների 1-7 դասարանների սովորողների համար: Ժողովածուն բաղկացած է 6 բաժնից. 1. Վարժություններ, էտյուդներ, փոքր պիեսներ. 2. Կոմիտասի ստեղծագործություններ (փոխադրումներ), 3. Ժողովրդական երգերի, գործիքային մեղեդիների և պարեղանակների փոխադրումներ, 4. Հոգևոր մեղեդիներ, 5. Աշուղական երգի նմուշներ, 6. Հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Ժողովածուում ընդգրկված են բազմաժանր ստեղծագործություններ՝ էտյուդ, փոքր և մեծակտավ պիեսներ, ռայտոդիա, կոնցերտ, հոգևոր մեղեդիներ (տաղ), ժողովրդական երգերի, հովվական մեղեդիների և պարեղանակների մշակումներ, փոխադրումներ, ինչպես հեղինակի, նույնպես և այլ երաժիշտների կողմից (Խ. Ավետիսյան, Խ. Ներսիսյան, Օ. Գալստյան, Մ. Դեմիրճյան, Գ. Սանասյան, Ս. Երկնափեշյան, Հ. Ասատրյան: Ժողովածուն շարունակում և լրացնում է շվի նվագարանի՝ թե՛ նվագացանկի հարստացման, և թե՛ դասավանդման գործընթացը նոր աստիճանի բարձրացնելու մասնագիտական փորձերը:


Ձեռնարկը սկսվում է առաջաբանով, հեղինակն է երաժշտագետ, ԵՊԿ դոցենտ Անահիտ Կիրակոսյանը: Նոտային տեքստի խմբագրումը և ձայնանիշերի համակարգչային շարվածքը՝ Նուրե Դանիելյանի, համակարգչային ձևավորումը՝ Կ. Կարապետյանի: Տպագրությունն իրականացվել է «Լուսաբաց» հրատարակչատան տպարանում:

Ինչպես նշել է ՀՀ Պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Արզաս Ռսկանյանը. ««Պատանի շվիահար» ձեռնարկ-ժողովածուն մինչ այժմ ստեղծված նմանատիպ ձեռնարկների շարքում

առանձնանում է նոր թարմ շնչով: Մեծ նշանակություն է ունեցել նաև այն, որ ինքը՝ հեղինակը բարձրակարգ կատարող է»:

Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Նորայր Դավթյանի բնորոշմամբ. ««Պատանի շվիահար» ուսումնական ձեռնարկ-ժողովածուի հեղինակը և կազմող Հելբերտ Ասատրյանը շատ նպատակասլաց ու տաղանդավոր երաժիշտ է: Իր կատարողական արվեստին քաջածանոթ լինելուց բացի, բացահայտել է նրա մեջ մեծ մանկավարժի: Ունի երաժշտական բարձր ճաշակ: Այդ են վկայում նրա ու իր սաների կատարողական ցանկի ճիշտ ընտրությունը: Պրպտող է, անընդհատ փնտրում է նորը, ստեղծագործությունները կատարում է նոր մեկնաբանմամբ: Գիրքը, կարծում եմ, իր տեսակով շատ ընդունելի է, նոր խոսք է՝ հետաքրքիր ու նոր ստեղծագործությունների առումով: Լինելով վիրտուոզ կատարող, տիրապետելով գործիքի կատարողական հնարավորություններին, փոխադրված նյութերը համապատասխանեցված են շվի գործիքի կատարողական հնարավորություններին, օգտագործելով նաև շորիխների ողջ ներկայացանկը:

Գիրքը նորություն է, որը կհարստացնի շվի գործիքի երկացանկը ինչպես հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցներում, այնպես էլ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում»:



ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ երաժշտագետ, «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆՄԵՏՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՆՎՅՐԱԾԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03U059505 տրված 7.04.2003 թ.
ԳԻՄՆԱԴՐՈՒՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍՈՐԱՅՅԱՆ, ԳՈՋԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Թղթարկման պատասխանատու՝ ԳՈՋԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԳՈՋԱՐ ՇԱԳՈՅԱՆ, ՆՈՅԱ ԱԶՆԱՌԻԶՅԱՆ (ռուս.)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՋԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համաձիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Փավակը 14 էջ: Ստորագրված է 27.04. 2019:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունն նշված հասցեով.

0001, ք.Երևան, Սայաթ-Նովա 1ա
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-
Yerevan-State-Conservatory-996490150508214/

